

# ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

## ԽՎԻՆ ԴԱՐԱԿԱՄ

III \*)

Յայտնի է թէ ինչ ահազին գեր է կատարել Մխիթարեան միաբանութիւնը հայ ազգի մէջ: Վաստահ կարելի է ասել որ մի ամբողջ դար, մինչև XIX դարի էլքը, զա միակ հիմնարկութիւնն էր, որ լոյս և զիտութիւն էր մասակարարում հայերին: Մի անօրինակ բեղմնաւոր գրական գործունէութեամբ ո, Ղազարի վանքը դարձաւ մի երեսյթ, որի նմանը չէ տեսել մեր պատմութիւնը: Հայերը շատ տեղեր էին աշխատում ծաղկեցնել մայրենի գրականութիւնը, բայց ոչ մի տեղ չը կարողացան հաւասարուել Վենետիկի հայ կրօնաւորներին, որոնք երկար ժամանակ անյաղթելի և աննկուն տիտանների նման էին երեսում ազգի աչքին:

Իբրև այսքան խոշոր մի երեսյթ, Մխիթարեան միաբանութիւնը, բնականաբար, շատ վէճերի ու պայքարների առարկայ պիտի դառնար: Մենք արդէն տեսանք որ Հոօմի ստրուկ հայ կաթոլիկութիւնը համարում էր մխիթարեաններին ոչ բաւականաշափ ջերմեռանդ հաւատացեալ. այդ վերաբերմունքը շարունակուեց երկար, յարուցեց փոթորիկներ, որոնք մեծ ազդեցութիւն ունեցան Մխիթարեան ուխտի վրայ: Նշանաւոր է, որ մինչդեռ մխիթարեանները ֆանատիկոս լատինամոլութեան աշքում դաւաձաններ էին, հայ-լուսաւորչականներն էլ չէին ընդունում նրանց իբրև իբրանց շահերին նուիրուածների: Երկու կողմի համար էլ ա. Ղազարի կրօնաւորները դաւաձաններ էին: Ինչու էր այսպէս: Թողնելով առ այժմ պրօպագանդայի նեղմիրտ աշակերտաներին, տեսնենք թէ ինչ էր Մխիթարը լուսաւորչականների կարծիքով:

XIX դարի կէսում Մխիթարեան միաբանութիւնից հե-

\*) Տե՛ս «ԵՐԵՎԱՆ» № 1.

ռացած մի քանի հայ վարդապետներ տարածեցին մեզանուած այն կարծիքը, թէ Մխիթար Սեբաստացին բոլորովին նուիրուած չէր կաթոլիկութեան, թէ այդ կաթոլիկութիւնը միայն մի դիմակ էր նրա համար, որովհետև գործելով իտալիայում, վայելելով կաթոլիկ աշխարհի նիւթական և բարոյական աջակցութիւր, նա արտաքրուատ, այդ բարիքների համար, իրան ձեւացնում էր հարազատ կաթոլիկ, մինչդեռ հոգով կպած էր իր մայրենի եկեղեցուն: Մխիթարի յաջորդներն էին—ասում են շատերը մեզանուած—որ գաւաճանեցին իրանց առաջին աբբայի սկզբունքներին, չը կարողացան թագնուել նրա դիմակի տակ, չը կարողացան կեղծել և խարել, ինչպէս անում էր Մխիթարը, այլ խորուցին թունդ կաթոլիկութեան մէջ, դարձան Հոօմի կոյր արբանեակներ \*):

Որքան ճիշտ է այս վկայութիւնը: Որքան ճիշտ է թէ Մխիթարը ճարպիկ ձեռնածուի նման խարում ու մոլորեցնում էր պապական աթոռը այնքան ժամանակ:

Մեզ թւում է որ հարցը ճիշտ կերպով չէ լուսաբանուած մինչև այժմ: Պէտք է, ամենից առաջ, թողնել Մխիթարի դիմակի մասին կազմուած առասկելը: Ամենից շատ առողջ դատողութիւնն է այսպէս որահանջում: Մխիթարի պէս մի անձնաւորութիւն, որի համար այնքան ահապին, առաջնակարգ նըշանակութիւն ունէր կրօնական ջերմեռանդութիւնը, չէր կարող կեղծել մօտ կէս դար, երբ նա վարում էր իր միարանութեան գլխաւորի պաշտօնը և ստիպուած էր պայքար մղել իր հակառակորդների դէմ: Խարեւ ուրիշի աշքին թող փշեւ երկդիմի ու կեղծաւոր արարքներով մարդկանց բարեսրտութիւնը շահագործել—այսպիսի յատկութիւններ չը պիտի որոնենք մենք մի ճգնաւորի մէջ, որ հագնում էր կաշեայ շապիկ և այդ շապիկի վրայ խիտ առ խիտ շարուած էին սուր երկաթէ խայթոցներ \*\*): Նրա գործերից ոչ մէկը չէ վկայում թէ ճիշտ որ նա խարում էր, իսկ կաթոլիկ կղերը, Հոօմի քթի տակ, այնքան միամիտ էր, որ խարում էր այդ մարդու ձեռքին...

\*) Որքան մեզ լալտնի է, առաջին անգամ Մխիթարի մասին ալսպիսի կարծիք լալտնել է մեզանուած Գարբիէլ վարդապետ Նըվազովսկին իր անլուազիծ ոգուց և ընթացից Մխիթարեան Սիարանութեանս բրօշիրում (Պարիզ, 1857): Ալնուհետև նա իրեւ լաւասոնեղեակ առաջնորդ հանդիսացաւ ուրիշների համար, որոնք կրկնեցին մի և նոյն բանը (օր. Մխիթար Նալբանդեան—«Հիւասափալլ», 1858, Ա. Երիցեան—«Վենետիկի Մխիթարեանք», Թիֆլիս, 1883):

\*\*) Աղոնց, Եր. 82:

Ոչ, Միմիթարը կաթօլիկ էր.—ոչինչ յանցանք չը կայ այս հանգամանքի մէջ: Իր տպագրած Աստուածաշունչի վերջում Միմիթարը պարզ ասում է. «Թէպէտ սիրում եմ իմ աղքը և նրա օգտի համար աշխատելը, բայց դրանով իմ սիրաը Հոռոմի սուրբ եկեղեցու ուղղափառ հաւատոի գաւանութիւնից չէ թուլանում: Եւ հակառակը. թէև ամեն կողմով ինձ միշտ ենթարկել եմ և ենթարկում եմ Հոռմի գահի հնագանդութեան, որովհետեւ մեր հայր սուրբ կուսաւորիչն էլ օրինակ է ինձ համար, բայց դրանով իմ սէրը և իմ աղքի օգտի համար աշխատելու ջանքը (թէև ազգը ինձ այսպիսի հնագանդութեան համար արհամարհէ) երբէք չի թուլանայ»: Իրաւունք ունինք չը հաւատալու այսքան հաստատ ու որոշ գաւանութեան:—Երբէք: Եւ սակայն մեղանում եղել են մարդկի, որոնք հենց այս իսկ խօսքերի վրայ են հիմնել իրանց կարծիքը թէ Միմիթարը դիմակ ունէր:

Թիւրիմացութիւնը ամբողջապէս առաջ է գալիս այն հանգամանքից, որ Միմիթարը առաջինն էր, որ հայերի մէջ այսպիսի սկզբունք էր քարողում: Որոնելով դիմակ Միմիթարի դէմքի վրայ, մենք նկատի չենք առնում թէ ազգ և Հոռմ տարբեր բաներ են, թէ կարելի է լինել հաւատացող կաթօլիկ և միաժամանակ նաև լսւ հայ: Մինչև Միմիթարը մեղանում չը կար այսպիսի հասկացողութիւն: Կաթօլիկութիւն—նշանակում էր կատաղի, կոյր, անհաշտ թշնամութիւն հայութեան, հայոց լնդուի, հայ աւանդութիւնների դէմ: Միմիթարը առաջին հայ-կաթօլիկն էր,—հասկանալով այս բառը իր ճշմարիտ, արդար մտքով,—ազգով հայ, կրօնով կաթօլիկ, ինչպէս կայ կաթօլիկ քրանսիացի, սպանիացի, գերմանացի: Ս. Ղաղաքի վանքը մեղանում վաղուց սկսուած կաթօլիկական հոսանքի առջև կանգնեց իրեն գրանիտեայ անկիւնաքար, որ գարձնում էր այդ հոսանքը անմիտ լատինամոլութիւնից և աղքատեացութիւնից դէպի հայտաբութիւն: Դեռ ունիթօրների ժամանակից Հայաստանում՝ մի ողբալի իրողութիւն էր գարձել թէ Հոռմի ետևից գնալը նշանակում է հայութեան դէմ գնալ: Միմիթարեան միաբանութիւնը եկաւ ջախջախելու այդ հին վիշապի գլուխը: Նրա հիմնադրի մեծութիւնը անմենից շատ այս հանգամանքի մէջ էր երեսում: Նա հասկացաւ և գործադրեց այն ճշմարտութիւնը թէ կարելի է Հոռմինը Հոռմին տալ, աղքինը—ազգին:

Բազմաթիւ իրողութիւններ և վկայութիւններ կան, որոնք հաստատում են Միմիթարի ուղղամիտ կաթօլիկութիւնը: Իրեն կրօնաւոր, նա կաթօլիկ էր և Հոռմի եկեղեցու շահերին նուիրուած: Կեղծաւորութիւն և խարերայութիւն չենք կարող գտնել

այն յարաբերութիւնների մէջ, որ նա ունէր Հոռմի հետ. նրա աշակերտները, քարոզիչի գաւազան վերցրած, Հայաստան էին գնում ոչ թէ դիմակաւորուած միաբանութեան գործերը պատմելու, այլ պարզապէս պապականութիւն տարածելու համար: Բայց եթէ նա միենոյն ժամանակ այնքան լայն ու աղատամիտ հայեացքների տէր էր, որ միւս ֆանատիկունների նման չէր ընդունում թէ ոչ կաթոլիկի հայութիւնը մի ժանախատ է, որից պէտք է փախչել, այդ, ի հարկէ, չէ նշանակում թէ նա դիմակաւորուած լուսաւորչական էր:

Միսիթարը երևան եկաւ մի այնպիսի ժամանակ, երբ կաթոլիկութիւնն ու լուսաւորչականութիւնը միմիայն անողորմ կորու էին ճանաչում իրար գէմ, կոփւ՝ ինչպէս ճնարաւոր էր—ձիրաններով, ժանիքներով, մահմերդական բանտերով, մատնութիւններով և այլ այսպիսի ստորութիւններով: Սերաստացի կրօնաւորը ընկաւ հալածանքների մէջ, բայց այդտեղ նա ճիրաններ սրել չը սովորեց, վրիժառու կրքեր չը վառեց իր մէջ: Նա բացեց հաշտութեան, համբերողութեան ճանապարհը. կրօնական վէճները նա անցկացրեց մաքի, գրականութեան շրջանը: Միսիթարը հիանալի կերպով ըմբռնեց այն ժամանակուայ դրութիւնը: Տեսնում էր հայ ազգի տգիտութիւնը և հասկանում էր որ այդ տգիտութեան յաղթողը ոչ Կ. Պօլում կամ էջմիածնի մօտ բոյն դրած եզուխտնների ճարպիկութիւնն ու անբարոյական մեքենայութիւնները կարող են լինել, ոչ խանների ու փաշանների կոկորդը խրած կաշառքները, այլ մի բան միայն—դիտութիւնը: Դա միանգամայն անսխալ միջոց էր և անխորտակելի զէնք: Հասրիւր տարինների ընթացքում ո. Ղաղարի վանքը լոյս էր հանում կաթոլիկութեան ջատագովութիւններ, քարոզում էր պապական գաղափարներ, բայց հայ ազգը, նոյն խակ նրա ամենամոլուանդ մասը, չէր այրում այդ գրքերը, այլ նրանցով զարդարում էր իր տները, կարդում էր և շարունակում էր համարել այդպիսի գրքեր հրատարակուններին յարգանքի ու պատուի արժանի հայեր: Համաձայննել կամ հակառակուել այդ գրքերին կարող էր ամեն մէկը. բայց ինչ էլ լինէր, Միսիթարեան միաբանութիւնը յաղթահարեց ամբողջ ազգը, հպատակեցրեց իր հեղինակութեան գարձաւ մաքերի տէրն ու հրամանատարը: Նա զիտուն էր, լաւ պատրաստուած, և մեր հայրենի տգիտութեանը մնում էր գետնապարշ ընկնել նրա առաջ, գալարուել անկարողութիւնից:

Բայց գրականութիւնից, Միսիթարը իր գործունէութեան համար մի ուրիշ միջոց էլ ընդունեց—քարոզչութիւնը: Սա նրա ամենամեծ սխալն էր, որ շարունակեցին և նրա յաջորդները: Միսիթարական եռանդ և ընդունակութիւն Միսիթարեանները երբէք

չեն ցոյց տուել: Ամբողջովին գրքերի նուիրուած մի վաճական միաբանութիւն, որ մի ակադեմիա էր հայ ազգի համար, չչը կարող իր սահմանափակ միջոցներով մի առանձին արդիւնք աւելացնել կաթօլիկ պրօպագանդայի վրայ, բայց այդ պաշտօնը, որ թիւրիմացութեամբ թէ հանգամանքների ստիպմամբ նա յանձըն էր առել, միշտ ջլատել է նրա ոյժերը, հեռացրել է նրան իսկական կոչումից—զրական գործունէութիւնից, և բաւական դցել է Մխիթարեանների հեղինակութիւնն ու պատիւը: Անհամեմատ արդիւնաւոր կը լինէր ո. Ղազարի մտաւոր գործունէութիւնը, եթէ նրան աջողուեր հեռու մնալ այն պայքարներից, որ մղում էին հայերի դէմ լատինամոլ կաթօլիկները: Բայց այդպիսի բախտ չունեցաւ նա, և առաջինը Մխիթարն էր, որ իր վաճքի մէջ մտցրեց մի այդպիսի վխալ և անօգուտ ուղղութիւն: Այստեղ արդէն մեղալի հակառակ կողմն է երեսում:

Մխիթար Սերաստացին այն տեսակ գործիչներից չը, որոնք երևան են գալիս իրեն վիրանորոգիչներ և, կոփւ յայտարարելով անհամակրելի սկզբունքների, պակասութիւնների դէմ, յաղթանակ են խլում երկար ու յամառ մաքառունների միջոցով: Դա կօմպրօմիսի, զիջողութիւնների մարդ էր, որի համար մեծ նշանակութիւն ունէր «Փօլիթիքան»: իսկ յալտնի է որ «Փօլիթիքա» ասած բանը աջողութիւն հնձում է միայն այն դէպրում, երբ արհամարհում է նոյն իսկ բարոյական սկզբունքները:

Իր միաբանութեան զիրքը ապահովելու համար, նրա գոյութիւնը կաթօլիկ աշխարհի աջքում անհրաժեշտ դարձնելու համար, նա առաջ քաշեց քարոզչական, միսիօնարական գործը: Մենք չենք ասում թէ հայերին կաթօլիկացնելու միաքը անկեղծ չչը Մխիթարի մէջ: Ոչ, մենք հաւատացած ենք որ նա կարող էր շատ համոզուած լինել թէ այդպէս հարկաւոր է, մանաւանդ որ սկզբում, մինչև Վենետիկ փոխադրուելը, միաբանութեան առաջ զիխաւորապէս քարոզչական գործունէութիւնն էր գրած: Բայց ինչո՞ւ էր այդ հանգամանքը առանձնապէս շեշտուում այն բազմաթիւ վկայագրերի մէջ, որ տուել են Մխիթարին զանազան կաթօլիկ կղերականներ: Մխիթարը, առհասարակ, համեստ մարդ էր, փախչում էր պատիւններից, մինչև կեանքի վերջը վարդապետ մնաց, իսկ «Աբբայ» պատուանշանը, որ տուած էր Հոօմից, այնքան վիրաւորում էր նրա հոգու խոնարհութիւնը, որ նա այդ բառից առաջ միշտ դնում էր «Կոչեցեալ»: Եւ սակայն Մխիթարը անպատեհութիւն չչը համարում ընդունել այնպիսի գովասանական թղթեր, որոնց մէջ շեշտուում էր նրա ուղղափառ ու հարազատ կաթօլիկութիւնը և մանաւանդ այն թէ նա իր ազգակիցների մէջ քարոզում է հոօմէական դաւա-

նութիւնը։ Կզերականների տուած վկայաթդերի վրայ աւելանում են Հայաստանի գաւառներից եկած հանրագրերը. Եւդօկիայից 1710 թուականին գրում են թէ Մխիթարի աշակերտները այնտեղ գիտում են արեգակի պէս և եթէ միշտ մնային այնտեղ, ամբողջ քաղաքը կաթոլիկութիւն կ'ընդունէր։ Անկիւրիայից ուղարկուած հանրագիրը վկայում է որ Մխիթարի միաբանութիւնը հնագանդեցնում է հայերին կաթոլիկ եկեղեցուն։ Նոյն տեսակ վկայութիւններ գալիս են Կ. Պօլսից, Զմիւռնիայից, Սեբաստիայից \*): Այդ թղթերը առանց Մխիթարի կամ նրա աշակերտների գիտութեան չէին կազմուում. դրանք հարկաւոր էին ոչ այնքան ընտանեկան ախորժելի ընթերցանութեան համար, որքան Հոօմին ներկայացնելու և նրանից աջակցութիւն գտնելու համար։

Պակասը լրացրին Մխիթարի թշնամիները։ Դրանց պապանձեցնելու համար Մխիթարը պիտի հաւատացնէր Վասիլիանի իշխաններին որ ինքը ոչ միայն ջերմեռանդ կաթոլիկ է, այլ և նպատակ է ընտրել առաքելական քարոզութիւնը հերձուածող հայերի մէջ։ Եւ Հոօմը այդպէս էլ նայում էր հայ վարդապետների միաբանութեան, ազմինքն տեսնում էր նրա մէջ մի գործիք, որի միջոցով աւելի հեշտ պիտի լինէր պրօպագանդան առաջ տանել հայերի մէջ. գոնէ այսպէս է արձանագրել պատմութիւնը \*\*):

1718 թւականին Մխիթարը գնաց Հոօմ՝ անձամբ լրացարութիւններ տալու և իր վրայ բարդած ամբաստանութիւնները հերեւելու համար, կենուչ ՏԻ պապը նրան շատ սիրով ընդունեց և փայփայեց։ Եթէ հաւատանք Մխիթարի կենսագրութեան, այդ ընդունելութեան մէջ էլ գործում էր նոյն աստուածային մատը, որ բերել հասցրել էր սեբաստացի վաճառականի որդուն այստեղ։ Բայց աւելի ընական է ընդունել որ ս. Պետրոսի աթոռակալը բազմաթիւ վկայութիւններ ունէր իր առջև Մխիթարի օգտակարութեան մասին և հէնց այդ պատճառով էլ այնպէս սիրավեր էր նրա հետ, յօժարութեամբ հաւատաց նրա անմեղաթեան և ի նշան իր բարեհածութեան չնորհեց հազար հատ ինդուլֆինցիա, որպէս զի Մխիթարեան քարոզիչները տարածեն Հայաստանի հաւատացեալների մէջ։

Մեզ յայտնի չէ թէ ինչպէս Մխիթարը արդարացրեց իրան պապական հաւատաքննութեան առաջ. նրա ներկայացրած թրդթերի բովանդակութեան ծանօթ չենք, որովհետեւ կենսագրու-

\*.) Աղոնց, եր. 242—233.

\*\*) Լավուս և Ռամբո—„Վեօնայ Իստրոյ“, տ. VI, մ. 1899, եր. 231.

թիւնը ամենայն խնամքով թագցրել է այդ բոլորը, բաւականա-  
նալով միայն անորոշ խօսքերով թէ Աստուծու օգնութեամբ  
Միխթարը յաղթող դուրս եկաւ, լոեցրեց իր թշնամիներին: Եւ  
Միխթարի՝ գեպի Հոօմն ունեցած յարաբերութիւնները թա-  
ղուած կը մնային մթութեամ մէջ, եթէ 1879 թուին Զմիւռ-  
նիայում մի կաթօվիկ վարդապետի ձեռքով չը հրատարակուէր  
մի բրօշիւր (\*), որ գոնէ աղօտ լոյս է գցում այդ խնդրի վրայ:  
Այդտեղ տպուտծ վասերաթղթերից մնաք նախ և առաջ իմանում  
ենք հետեւեալը. «Սրբազն Պապն և Ս. Ֆողովի տէ Բրօքական-  
տա ֆիտէ կացուցեալ են զՄիխթար Արքա հայրն վերակացու և  
հովիւ ամենայն ազգին Հայոց, զի կառավարեսցէ զնոսա ըստ  
խոհեմութեան իւրում և ոչ այլ ոք իշխիցէ ի վերայ նոցա»: Սա  
արդէն մի ապացոյց է որ Միխթարին այնքան էլ խորթ չէին  
իշխանապետական տեսչերը, ինչպէս ճգնում են ցոյց տալ նրա  
աշակերտները: Անչուշտ բոլոր հայերի կառավարիչ և հովիւ  
գառնալը նոյնպէս մի միջոց էր միաբանութեան դիրքը ամրա-  
պնդելու և հակառակորդներին լոեցնելու համար: Եւ իրաւ. Հոօ-  
մը, տալով նրան այդպիսի իշխանութիւն, այնքան հաւատ ունէր  
նրա վրայ, որ պատրիարքական փոխանորդութիւնից արձակեց  
մի կաթօվիկ եպիսկոպոսի (\*\*): այն պատճառով, որ նա Միխթարի  
և նրա աշակերտների դէմ խօսել էր: «Փօլիթիքայի» միջոցով  
այսպէս հաշիներ տեսնել հակառակորդների հետ—ահա ինչ որ-  
խաների մէջ էր ընկնում սերաստացի նախկին ճգնաւորը: Կա-  
թօվիկ կղերականութեան մէջ գուցէ առանց այսպիսի միջոցնե-  
րի չէր էլ կարելի աջողութիւն գտնել: Բայց իրողութիւնը մը-  
նում է: Ահա նոյն «փօլիթիքայի» մի այլ աւելի անհրապոյը կողմը:

Սպահանի և նորաջուղայի մէջ սկսուած կրօնական կատա-  
ղի խոռվութիւնները (\*\*\*) հարց արձարծեցին կաթօվիկների մէջ  
թէ չը պէտք է յաճախել հայ-լուսաւորչականների եկեղեցիները:  
Հոօմի պապը վճիռ արձակեց այդ մտքով: Խակ երբ կրօնական  
խառնակութիւնները Պարսկաստանից անցան թիւրքաց Հայա-  
տան, այդտեղ գործող քարոզիչներն ու վարդապետները պա-  
հանջում էին որ պապական այդ վճիռը գործադրուի նաև Թիւր-  
քիայում գանուող հայ եկեղեցիների վերաբերմամբ: Այդ ծայրա-

\*) «Արքայ Միխթարայ վարդապետի արաբեալ պատճառք որք առ-  
բերին ընդէմ նոցին, որք ասեն թէ ոչ երբէք պարտ է զնալ ուղղա-  
փառց ի ժամն հայոց», հրատարակեց Առկաս վարդապետ Տէրտէրեան  
կարկոր ծանօթութիւններով.

\*\*) Եր. 19—20.

\*\*\*) «Հայկական Տպագր.», I, Եր. 251—254.

յեղ անհամբերողութիւնը Մխիթարին չափազանցութիւն էր երևում: Լատինացման գաղափարը դրանով կատարեալ յաղթանակ պիտի տանէր. հայ-կաթոլիկները մի կողմից հեռացրուած պիտի լինէին հայ երեղեցուց, իսկ միւս կողմից՝ բոլորովին զրկուած սեփական եկեղեցի ունենալու հսարաւորութիւնից, որովհետեւ Թիւրքիայում նրանք հնթարկուած էին Կ. Պօլսի հայոց պատրիարքի իրաւասութեան և իրաւոնք չունէին առանձին եկեղեցիներ կառուցանելու:

Այդ պատճառով Մխիթարը 1733 թուի ապրիլի 14-ին Հոօմին ներկայացրած մի մանրամասն գրութեան մէջ ապացուցանում էր թէ կաթոլիկները կարող են գնալ լուսաւորչականների եկեղեցիները: Անկասկած, նա մի շատ արդար դատ էր պաշտպանում: Մխիթարը, հայութեան գաղափարի նախանձախնդիր, շատ լաւ գիտէր որ հայ-կաթոլիկութիւնը այն չը պիտի լինի, ինչ ուղում են դարձնել լատինական կղերականները. դա նոյն ազգի մի մասն էր, բաժանուած կրօնով, և եկեղեցական մերձաւորութիւնը կը լինէր երկու մասերի համար փոխադարձ յարգանքի և համերաշխութեան կապ: Ճշմարիտ հայ-կաթոլիկութիւնը, որի ներկայացուցիչը Մխիթարն էր, միայն վրդովուել կարող էր այն խրատից, որ կազմել էին պապականութեան կոյր ստրուկները և որ ասում էր. «Հայոց ժամուն առջևէն անգամ մի անցնիր. իսկ եթէ անցնել պէտք եղաւ ու գդակդ գըրխէդ հօն ձգեցիր, ներս մի մտներ առնելու, ձգէ փախիր» \*): Նոյն իսկ բարոր հայերին կաթոլիկ դարձնելու տեսակէտից էլ շատ վնասակար էր այս աստիճան արհամարհանքը դէպի լուսաւորչական եկեղեցին: Մխիթարը գնաց այդ հոսանքի դէմ: Բայց ինչպէս էր նա պաշտպանում այդ դասը:

Նա ասում էր թէ հայոց եկեղեցին Հոօմի կողմից պաշտօնապէս չէ ճանաչուած հերձուածող, բայց հայերը իրապէս հերձուածող են: Թէև այսպէս, բայց պէտք է թոյլ տալ որ ուղղափառները գնան հերձուածողների եկեղեցին, որովհետեւ որիից ճար չը կայ. եթէ ճար լինէր, եթէ կաթոլիկութիւնն էլ իր եկեղեցիներն ունենար, այն ժամանակ, ինչ խօսք, չը պէտք էր թոյլ տալ ուղղափառին մտնել չարափառի եկեղեցին: Բացի ճար չը լինելուց, ուղղափառներին չը պէտք է արգելել և այն պատճառով, որ ոչինչ վաս չի լինի, եթէ նրանք ազատ մտնեն հերձուածող եկեղեցին, որովհետեւ կաթոլիկները զարգացած են, իսկ հերձուածող հայերը՝ տգէտ. կաթոլիկը հեշտութեամբ կա-

\* ) Ալվաղովսկի, «Ռուսագիծ», Եր. 41.

րողանում է յաղթել հերձուածող քահանաներին և որսում է հերձուածողներին, մինչդեռ վերջիններս չեն կարողանում նոյն իսկ մի հատ ուղղափառ որսալ:

Բայց այսքանը դեռ ոչինչ: Լատինամոլները եկեղեցիների բաժանումն էին պահանջում մանաւանդ այս նպատակով, որ կաթոլիկները և լուսաւորչականները միմեանց հետ սիրով չը կապուեն, կամ ուրիշ խօսքերով—թշնամի ման միմեանց, որպէս զի կաթոլիկները նորից չը վերադառնան լուսաւորչական եկեղեցին: Այդ կասկածները ցրելու համար Միմիթարը գրում էր հետևեալը.

Ապաքայ այն կասկածելի վնասը թէ ուղղափառները, ժամ գնալով, կը կապուն հերձուածողների հետ սիրով ու ալղափսով կը մոլորուն, երբէք տեղի ունենալ չէ կարող: Նւ դրա պատճառը հետևեալն է, ուղղափառները այնքան զգուած են հերձուածողներից, որ եթէ պանցից իւրաքանչիւրը հարիւր տարի ապրէ և հարիւր քարոզիչներ լորդորեն ուղղափառներին պակասեցնել իրանց զզուանքի հարիւր աստիճաններից մէկը, չեն կարող պակասեցնել նւ այս բանի նշանը յայտնի է նրանով, որ հայ անունից էլ, որ ազգի անուն է և ոչ թէ արտնիի, ուղղափառները նոյնպէս զգուած են, և եթէ հնար լինէր, նրանք հայ անունն էլ կը ջնջէին իրանցից: Նւ քանի որ այս այսպէս է, ի՞նչպէս կարելի է որ կապուն նրանց հետ սիրով, նայ և այլ պատճառ: հերձուածողները իրանց տղիտութեան և կոպութիւնների պատճառով այնքան լիմարտիթեամբ են փարում միշտ, որ եթէ ուղղափառները նոյն իսկ աշխատիին էլ սիրել նրանց և կամ ախորժելի դառնալ նրանց մէջ, դարձեալ չէր լինի մէր և կապակցութիւն: Օւրիմն մնում է այն, որ չը կայ մի պատճառ, սրբ զրդուած զրկենք ուղղափառներին իրանց եկեղեցիներից: Որովհետեւ այս եկեղեցիները տեղի շատ ուղղափառների եկեղեցիներ են, քան հերձուածողների նրանք հիմունել են մեր սուրբ և ուղղափառ հայրերի ձեռքով: Նւ հերձուածողները համարեալ թիւրքաց բռնութեան օգնութեամբ ին գալիս մտնում մեր եկեղեցիները և ոչ թէ մենք ենք գնում նրանց եկեղեցիները: Նւ մեր այնտեղ մտնելով ուղղափառների թիւր օրէցօր բազմանում է և ամենքը շահում են: Դրանով էլ մեր եկեղեցիները ազատում են հերձուածողների ձեռքից: մենք գտնում ենք թիւրքերի իշխանութեան տակ և չենք կարող հերձուածողներին արտաքսել մեր եկեղեցոց ու մաքրել մեր եկեղեցին: Ուստի մեղ մոռմ է միան ան, որ նրանց զէպի մեղ գարձնելով՝ մաքրենք եկեղեցին: Բայց եթէ մենք դուրս գնանք ու թողնենք եկեղեցին նրանց, այն ժամանակ եկեղեցին յափառեան կը մնայ անմաքուր, իսկ մենք առանց եկեղեցու թափառական ու անկրօն կը լինենք զուր տեղից: —Կարձեալ այս էլ յայտնի է, որ ամեն տեղ մեծատունները և իսհեմ մարդկիկ ուղղափառ են և նրանք են եկեղեցիների մէջ և իշխանաւորների դռներին իշխող ու խօսող նակ երբ այսպիսի իշխողները իրանք իրանց արտաքրեն եկեղեցիներից, այն ժամանակ այս եկեղեցիներում իշխող կը մնան աղքատները և իմարները: Նւ եթէ պատճառում է երթեմն, որ մի որ և պատճառով ուղղափառները կամենում են խօսել, խաժամուժ և տգէտ ամրութը, լուղուած չար քահանաների ձեռքով, սկսում է աղաղակել թէ զուր որ չէք հաւանում և չէք զալիս մեր եկեղեցիները, ի՞նչպէս կարող եք այժմ մեծարանութեամբ իշխել մեր եկեղեցիների և քահանաների վրա:

Ալո պատճառով եթէ մեծատուն և խոհեմ ուղղափառները միշտ գտնուեն եկեղեցիների մէջ, ոչ ոք չէ կարող ընդդիմանալ նրանց, և ինչ էլ հրամայեն, կարող են կասարել տալ Տիրոջ օգնութեամբ: Եւ աւսպէս փոքր առ փոքր կարելի կը լինի սրբել և մաքրել մեր եկեղեցիները\*):

Ահա ինչ լեզուով խօսել գիտէր Հոօմի՛ հետ այն մարդը, որին մեղանում համարում են կաթօլիկական դիմակի տակ գործող հայ-լուսաւորչական: Բայց եթէ մենք Մխիթարի այս խօսքերը համարենք նրա անկեղծ ու խորին դաւանակը, այն ժամանակ շատ տարբերութիւն չենք գտնի նրա և Պրօպագանդայի մի մոլի աշակերտի մէջ. մինչդեռ թէ Մխիթարի և թէ նրա միաբանութեան գործերը երաշխատոր են, որ նրանց մէջ չը կար այն աստիճանի քանատիկոսութիւն, որ հայոց եկեղեցիները պիղծ և անմաքուր համարէին: Նրանց վերաբերմունքը դէպի հայ «հերձուածողները» աւելի մեզմ էր, աւելի բարեկամական, քան այս գրութեան մէջ: Եւ եթէ Մխիթարի անունը կրող մի այս տեսակ անպատիւ թուղթ է մնացել, պատճառը Հոօմին հաճոյանալու քաղաքականութիւնն էր, մի բան, որ մինչև մեր օրերը Մխիթարեան միաբանութեան անհամակրելի կողմն է կազմում և շատ փաստերով է երևան եկել:

Մեզ կարող են ասել թէ ուրիշ կերպ չէր էլ կարող վարութիւն Մխիթարը Մի անյայտ հայ վարդապետ չէր կարող Հոօմին դասեր տալ, ջնջել այն դարաւոր նախապաշարմունքը, որ ասում էր թէ ով Հոօմի հետ չէ, նա պիղծ և անմաքուր հերետիկոս է: Այս, միանգամայն ճիշտ է այս առարկութիւնը: Բայց մենք արձանագրում ենք ֆաստը, որպէս զի պատկերացնենք Մխիթարեանների ոգին, այն մինսոլորտը, որ ստեղծուեց ս. Ղազարի վանքում սկզբից եեթ: Դա շատ կարեսոր է՝ միաբանութեան գրական գործունէութիւնը բնորոշելու համար: Թէ և մեզ համար աւելի հաճելի և պատուաբեր կը լինէր որ Մխիթարի պէս խոչոր անձնաւորութիւնը ճշմարտութեան անվեհեր զինուոր հանդիսանար, չը քաշուէր իսկութիւնը յայտնելուց, ուր և երբ էլ հարկաւոր լինէր դա, բայց չեղածը եղած դարձնել մենք չենք կարող. և պատմութիւնը, որ լոյսերի հետ գծագրում է նաև ստուերները, չէ կարող անաշառ չը լինել և մնեն մարդկանց վերաբերմամբ: Կօմպրօմիսների քաղաքականութիւնը միշտ այսպիսի հետևանքներ է առաջացնում: Եւ մենք կը տեսնենք թէ որպատի ազդեցութիւն է թողել այդ քաղաքականութիւնը ս. Ղազարի երկարատե, զարմանալի գործունէութեան վրայ...

Մի ուրիշ հարցի մէջ էլ Մխիթարը ցոյց տուեց թէ որքան

\*) «Արբակ Մխիթարակ վարդապետի Պատճառք», եր. 46—47.

մեծ առաքինութիւն է համարում յարմարուելը, կռուի մէջ չը մտնելը։ Մենք շատ անգամ առիթ ունեցանք խօսելու լատինացրած հայերէնի մասին, տեսանք որ հայոց լեզուի մէջ հրէշաւոր աղաւաղութիւնները մտցնողները գլխաւորապէս լատինամոլ կաթոլիկներն էին։ Այդ ֆանափիկոսները հայերէնը լատինացնելու մէջ չէին զեկավարում լեզուն հարստացնելու, կճնդանացնելու մարզով, այլ ունէին նոյն դաւանափոխական տենդը, որ նրանց ամբողջ էութիւնն էր վարակել նրանք համոզուած էին որ հայ աղգը կ'աղաւուի հերձուածողական և հերեւափկոսական կարծիքներից միայն այն ժամանակ, «երբ լատիններէնի ճիշտ թարգմանութեամբ գրուեն և բացատրուեն հոօմէական դաւանանքի խօսքերը» \*), Ունիթօնների ակամած այս բարբարոսութիւնները դնալով ողողեցին հայոց լեզուն. լուսաւորչականներն էլ ենթարկուեցին լատինացման ոգուն և այնպիսի գրագէտներ, ինչպէս էին Ուկան վարդապետը, Ղուկաս Վանանդեցին, պաշտում էին այն խորթ արեւստականութիւնները, որոնց ծնողը կաթուլիկութիւնն էր։ Առանց այդ էլ մեր գրաբար լեզուն վաղուց կորցրել էր իր կենսունակութիւնը, անհասկանալի, արհեստական էր. կաթոլիկական աղաւաղումները աւելի ևս դժուար, անմարսելի դարձրին նրան։ Եւ այդ գրութեան հասցրած լեզուն տիրապետող էր մեզանում մասնաւանդ XVII դարի ընթացքում։

Միսիթարը զգում էր լեզուն այդ բարբարոսութիւններից աղաւուելու անհամարեշտութիւնը. նա գիտէր որ պէտք է վերանորոգել գրաբարի հին ձևերը, վերադարձնել նրան նախկին հարստութիւնը ու այդպէս գործածութեան մէջ մտցնել. Բայց դրա համար պէտք էր հակառակուել լատինամոլների կուսակցութեան, որ այդ ժամանակները լատինացրած հայերէնի քերականութիւնները էր հրատարակել։ Երկար մտածեց Միսիթարը, բայց չը կարողացաւ լատինամոլներին հակառակուելու համարձակութիւն ստանալ. նրանց զայրոյթը չը գրգռելու համար նաստիպուած եղաւ, հակառակ իր համոզումքը, ընդունել բարբարոսական աղաւաղումներից շատերը և միայն մի քանի մասերում համարձակութիւն ունեցաւ վերականգնել զրաբարի կանոններն ու ձեւերը։ Զը կարողանալով յայտնապէս հակառակութիւն և թշնամութիւն հանել լեզու խանգարողների գէմ, Միսիթարը ընտրեց կօմպրօմիսի ճանապարհը, յոյս ունենալով որ աղաւաղումները հետզհետէ կը վերանան. և այդպիսի միջին ճանապարհ, հակառակուդներին չը գրգռելու, ամենքին շահելու միւ-

\*) «Ուրուագիծ Միսիթարեանց», եր. 35.

ջոց ներկայացնում է նրա «Քերականութիւնը», որ տպագրուեց 1730 թուականին \*): Նոյն այդ նպատակով էլ Միթթարը չը կարողացաւ ազատել իր տպագրած գեղեցիկ, պատկերազարդ Աստուածաշունչը այն նորմուծութիւններից, որոնք կային Ոսկանի Աստուածաշունչի մէջ։ Յայտնի էր, որ Ոսկանը սրբագրում էր մեր հին գրքերը լատինացրած հայերէնի ձևերի համաձայն, Բայց Միթթարը շատ քիչ բան ուղղեց Ոսկանի նորութիւններից. աւելին անել չը կարողացաւ \*\*):

Այս բարորից պարզ է թէ կաթօլիկական ձգտումները որքան մեծ ազդեցութիւն ունեին Միթթարի և նրա միաբանութեան վրայ։ Միանգամայն անկախ ու ինքնազլուխ դիրք գրաւել ս. Ղազարի կղզու վրայ, Հոռոմի աշքի առջև, անկարելի էր. և հայ ազգի գրական անխոնջ մշակները միշտ պէտք է գրտնուէին գամօլեան սրբ տակ, որ չափաւորում է եռանգը, գրկում է ինքնուրոյնութիւնից ու համարձակութիւնից։ «Ի՞նչ կ'ասէ Հոռոմը»—ահա այն սուրբ, որ միշտ կախուած էր Միթթարեան վանքի վրայ...  


## IV

Դիմենք այժմ այն հարցին թէ ինչ նշանակութիւն ուներ Միթթարեան միաբանութեան հաստատութիւնը՝ հայ ազգի լուսաւորութեան տեսակէտից։

Մասնենք XVIII դարի առաջին կէսում տիրող մնր իրականութեան մէջ և մենք մի առանձին հրաշալի երեսյթ, մի մեծ խորհուրդ կը տեսնենք այն հանգամանքի մէջ, որ մի խուռը հայեր անցնում են Եւրօպա՝ այնտեղ մի երկարատե, հարուստ գրական գործունէութիւն սկսելու համար։ Հինգերորդ դարից յետոյ ճակատագիրը դեռ այսքան ողորմած ու բարերար չէր եղել դէպի հայերը։ Այն հին նաւը, որ Մէթօնից իտալիա էր տանում Մըլիթթարին և նրա աշակերտներին, Հայաստանի բարի հրեշտակն էր, որ, կարծես, տեսնում էր թէ ինչեր են կատարուում Արեմուեան Եւրօպայում և իր փոքրիկ ու համեստ ոյժերը հաւաքել էր, տանում էր տղէտ ու թշուառ հայութիւնը դէպի այն հրաշալի լոյսերը, որոնք վառուել էին արևմուտքում։

Որքան և հեռու մնանք նախապաշարմունքներից, բայց և այնպէս, չենք կարող մի սպանչելի գուգատիսկութիւն, ճակատագրական մի տնօրինութիւն չը տեսնել այն հանգամանքի մէջ,

\*) Հ. Զամշեան, «Քերականութիւն հայկակեան լեզուի», Վենետիկ, 1779, առաջաբան։

\*\*) Հ. Զօհրաբեան, «Աստուածաշունչ», Վենետիկ, 1805, առաջաբան։

որ մինչդեռ մի կողմում կազմակերպում էր նորագոյն Եւրօպան, միւս կողմից ասիական բարբարոսութիւնների մէջ ուկոր մաշած մի ազգ, ինչպիսին էր հայութիւնը, պատրաստութիւն էր տեսնում հաղորդակից լինելու նրա բարիքներին գրականութեան միջոցով։ Շատ անգամ էր Հայաստանը մարդ ուղարկել Եւրօպա, որ այնտեղից ճրադներ բերեն հայրենի տունը լուսաւորելու համար։ Մենք տեսանք շատ անհամների այդ ձանապարհի վրայ. տեսանք Սոկանին, Թովմաս և Ղուկաս Վանանդեցիներին և ողջունեցինք նրանց ուղևորութիւնները, երախտագիտութեամբ ընդունեցինք նրանց ուղարկածները, օրհնեցինք նրանց բազմաչարչար ոսկորները, որոնք հող մտան օտար երկնքի տակ։ Բայց նրանք այնքան բախտաւոր չեն։ Մենակ էին ու անյայտ, և այն ժամանակուայ Եւրօպայի մեծ մասն էլ կաթօլիկական րէակցիայի գրկում լրտու ու անգործունեայ էր։ Այժմ, երբ Միթարն էր գրական գաղթականութիւն հիմնում Եւրօպայի երկընքի տակ, փոխուած էին հանգամանքները, ժամանակը բերել էր նոր, հրաշագործ ոգի։

Եւրօպան գտնուում էր այն փայլուն շրջանի մէջ, որ յայտնի է Լուսաւորութեան Դար անունով։ Դա նորագոյն ժամանակների ոգին է. զարթնում է Անգլիայում, անցնում է Ֆրանսիա, ապա Գերմանիա և Խտալիա։ Նա գրականութիւն է, միաք է, զիտութիւն է, գեղարուեստ է. բայց փակուած չէ մնում գրքի մէջ, այլ աղդում է կեանքի վրայ, առաջացնում է հասկացողութիւնների ու գաւանանքների մի ահագին յեղափոխութիւն։ Կազմում են նոր աշխարհայեցողութիւններ, խորտակուում են շատ հին կուռքեր։ Նոր, թարմ, ուժեղ հոսանքները ցնցում են հասարական և պետական հիմքերը։ Քաղաքական յեղափոխութիւնները արիւնով և բռնութեամբ յաղթահարում են հին աշխարհը, բարձրացնում են ազատ մարդուն։ Այդ աղատ մարդը, քանի գեռ միայն գրականութեան մէջ էր, կտրեց անցաւ ովկիանուը և Հիւսիսային Ամերիկայում պատրաստեց այն արիւնահեղ ապատամբութիւնը, որի նպատակն էր քաղաքական անկախութիւնը, և որի հետեանքը գարձաւ ուամկապետական, բոլորովին աղատ հանրապետութիւնը, հիմնուած Վաշինգտօնի ձեռքով։ Աշխարհը գեռ չէր տեսել այնպիսի հրաշալի կարգ։ Ամերիկական այդ յեղափոխութեան ոգին նորից անցաւ ովկիանուը, դուրս եկաւ ֆրանսիա, նրա պատրաստած զինուորները ծառայեցին ֆրանսիական մեծ յեղափոխութեան, որ պսակեց XVIII դարը, ոչնչացնելով գասակարգային խորութիւնները, եկեղեցականների տարածած նախապաշարմունքները և հրատարակելով աղատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն։

Մենք գոնէ մի թռուցիկ ակնարկ պիտի գցենք այսպիսի  
գործեր կատարած կուսաւորութեան Դարի վրայ, որպէս զի  
հասկանանք թէ որպիսի մտաւոր լոյսերի մէջ ընկաւ Միքիթա-  
րեան միաբանութիւնը, տեղափոխուելով հտալիա:

XVII Դարի երկրորդ կէսից Անգլիայում՝ միջնադարեան  
վերացականութիւնը տեղի է տալիս բնական գիտութիւններին:  
Ուսումնասիրուում են աշխարհները կառավարող օրէնքները, ի-  
սահակ Նիւտոնը իր անմահ գիտուն է անում, որ մի ամբողջ յայտ-  
նութիւն էր մարդկութեան համար: Դատողութիւնների տեղը  
բռնում է փորձը. մարդը այլ ևս կուրօքն չէ հետեւում հեղինա-  
կութիւններին, այլ ձգուում է փորձի, իրականութեան վերլուծ-  
ման միջոցով հասնել ճշմարտութեան: Կոյր հաւատը սկսում է  
վերանալ նրա տեղը այժմ կանգնած է բանականութիւնը: Սա  
բաց է անում մարդու աշքերը, քննադատական կարողութիւն է  
դնում նրա ձեռքում և սովորեցնում է լինել ազատ՝ մտածմունք-  
ների մէջ: Այդ ազատ մտածողները այնքան համարձակութիւն  
են սահմանում, որ սկսում են ոչնչացնել մարդկութեան վրայ տիրող  
նախապաշարմունքները:

Նոր հոսանքը ամենից առաջ ընդհարւում է եկեղեցու հետ:  
Եւ դա շատ բնական էր: Եկեղեցին էր որ պահւում էր հեղի-  
նակութիւնների վրայ, պահանջում էր անսպայման հաւատ: Բա-  
նականութիւնը, հրատարակուելով միակ անսփալ առաջնորդ մար-  
դու համար, քննադատում էր և ընդունում միայն այն, ինչ հա-  
կոսակ չէր իրան. նա մերժում էր կրօնական աւելորդապաշ-  
տութիւնները, որոնց մտցրել են եկեղեցու պաշտօնեաները ի-  
րանց օգտի համար. մերժում էր և հրաշագործութիւնները, ո-  
րնք անբնական էին: Ազատ մտածողներից մէկը, Զիլլինգվօրտ,  
գրում էր. «Ես համոզուած եմ որ Աստուած տուել է մեզ բա-  
նականութիւն, որպէս զի զանազաննենք ճշմարտութիւնը անճըշ-  
մարտութիւնից և նա, ով բանականութիւնը այս կերպով չէ  
գործ ածում, այլ հաւատում է իրերին չիմանալով թէ ինչու,  
նա հաւատում է ճշմարտութեանը պատահաբար և առանց ընտ-  
րութեան. և ես երկիւղ եմ կրում որ Աստուած չընդունէ այս-  
պիսի յիմար դռ»: Իսկ Զարլզ Բլօնտ գրում էր. «Ո՛չ, ես չեմ  
ուզում յոյս դնել հրաշճների վրայ, որպէս զի Սիմօն մողը, փա-  
րաւոնի մողերը, Ապօլօնիոսը և ուրիշները նոյնպէս չը պահան-  
ջեն ինձանից հաւատ և հնապանդութիւն. իմ առաջնորդը պիտի  
լինի միայն բանականութիւնը և նա, ի հարկէ, չի թուլացնի իմ  
քրիստոնէութիւնը» \*):

\*) 1. Геттнеръ, „Исторія Всеобщей Литературы XVIII вѣка“,  
Спб. 1897, т. I, եր. 29 և 35.

Ազատ մտածողները նոյն իսկ փորձում են նոր կրօն ստեղծել, բանականութեան վրայ հիմնած: Մտածող մարդկութեան առջև բացւում են լայն, անեղոր հօրիզօններ, Փիլիսոփայութիւնը, որ աստուածաբանութեան ստրուկն էր դարերի ընթացքում, ձեռք է բերում անկախութիւն: Լոկլը հիմնում է փիլիսոփայական նոր դպրոց, ուր արդէն ամեն ինչ հիմնուած է փարձի, բանականութեան վրայ, այդ փիլիսոփայութիւնը այլ ես ոչ թէ չէ ծառայում եկեղեցուն, այլ գնուում է նրա դէմ Քաղաքական հասկցողութիւնները կերպարանափոխուում են և ազատ մտածողութիւնը նոյն իսկ ոչնչացնում է կղերականների հաստատած այն միտքը, թէ թագաւորները իրանց իշխանութիւնը Աստուծուց են ստանում և միայն Աստուծուն էլ պիտի հաշիւ տան իրանց գործերի համար, գրա փոխարէն հաստատում է այն դրութիւնը, որ իշխանութիւնը ժողովրդից է բղխում և թագաւորը նրա ընտրեալն է: Գրականութիւնը կատարեալ ազատութիւն է ստանում: XVII դարի վերջում գրաքննութիւնը բոլորվովին ջնջում է: Զարգանում են գրականութեան բոլոր ճիւղերը, թատերագրութիւնը, բանաստեղծութիւնը նորից վերակենդանանում են, հիմնում իրական կեանքի երեսյթների վրայ, ծաղկում է մանաւանդ երգիծաբանութիւնը, իսկ պարբերական հրատարակութիւնները ամբողջ յեղափոխութիւն են մտցնում հասարակական հասկացողութիւնների մէջ: Այս ազատ հոսանքները, ի հարկէ, պիտի վերացնէին կրօնական խտրութիւնների պատճառով ծագող բռնութիւններն ու անարդարութիւնները, և Անգլիան, կրօնական ներքին երկարատև պառակտումներից ու իրարանցումներից յետոյ, մտաւոր այս նոր շարժման ազգեցութեան տակ, դաշնում է այն առաջին երջանիկ երկիրը, ուր յանցանք չէր համարւում տարբեր համոզմունքներ ունենալը թէ կրօնի և թէ այլ գործերի վերաբերմամբ: Սերունդների առաջնորդ են հանդիսանում խոչոր տաղանդի տէր հեղինակները, ուրնք, բնականաբար, բազմաթիւ էին հէնց վերակենդանութեան այսպիսի եռանդուն, թարմ, ոգեսրիչ ժամանակներում: Ֆրանկինը, Ամերիկայի Միացեալ Նահանգներ ստեղծողներից մէկը և ամենամեծը, իր ազատասիրական գաղափարները քաղում էր Դանիէլ Դէֆօի, «Թօբինդօնի» հոչակաւոր հեղինակի, գրուածքներից: Զօնաթան Սվիֆտ մինչև այժմ էլ կենդանի է իրեւ անդուգական երգիծաբան, ժամանակի բարերը ծաղրող: Ամբողջ XVIII դարը գրական մի հակայ առաջադիմութիւն է, որի առաջ խոչընդոտաներ չը կան և որ իր հետ տանում է և հասարակական զարգացած գիտակցութիւնը:

Անցնենք Ֆրանսիա: Այստեղ էլ XVII դարի վերջերում ենք տեսնում Լուսաւորութեան Դարի պատրաստութիւնները:

Զը նայելով որ Լուգովիկոս ԽIV-ի ժագաւորութիւնը ծայրայեղ աստիճաններին էր հասցել միապետական անսահման իշխանութիւնը և ամեն կենդանի բան ճնշում էր եղութաների մահացնող լուծի տակ,—ազատ միտքը, այնուամենայնիւ, զարթնում էր, համարձակ քայլերով առաջ գնում և լուսաբանում էր ժողովրդի աննախանձելի դրութիւնը, կրօնամոլ բռնապետութեան առաջացրած մոտաւոր և բարոյական անկումը: Գրականութիւնը կլասիկական ուղղութեան էր հետեւում, ասլում էր հների կեանքով, կտրուած իրականութիւնից, ժողովրդի կեանքից. դա պալատական գրականութիւն էր, ուր տիրում էին արքունիքի վայելուչ, շոկած ձեերը: Իրականութիւնը—դաշտերը, գիւղերը, անտառները—այդ ժամանակի գրական մարդկանց համար համանիշ էր կոպտութեան, վայրենութեան. ամեն ինչ այնտեղ ստոր ու բարբարոսական է, վիրաւորում է գեղագիտութեան զգացմունքը: «Այդ անճոռնի, անտաշ գիւղացիները, կեղտոտ կենդանիները, գոմանոցների հոտը, անձն ժայռերը, անտառների ամայութիւնը, ծառերի անկանոն խմբերը, որոնք թողուած են ընութեան կամքին, կաղամքի բանձարանոցները—սրանց վրայ կանգ առնէր բարեկիրծ մարդու ուշադրութիւնը» \*): Ամեն ինչ միայն արիստօկրատիայի և արքունիքի համար էր: Մնացած ժողովուրդը գոյութիւն ունէր միայն հարկեր տալու համար:

Կլասիկական այդ արուեստականութեան և քարացման հիմքերը փորել է սկսում նոր, ժողովրդական գաղափարը: Դեռ այն ժամանակ, երբ «թագաւոր-արեգակ» անունը ստացած լուդովիկոս ասում էր՝ «պիտութիւնը—այդ ես ինքս եմ», երեան է դալիս ընդդիմադիր գրականութիւնը, որ մի կողմից թագաւորի իշխանութիւնը ժողովրդի և միմիայն ժողովրդի բարօրութեան համար առհմանուած լինեն է հրատարակում, միւս կողմից կրօնի և մանաւանդ պապականութեան դէմ է զնում: Պահանջում են թեթևացնել ժողովրդի հարկերը, կանոնաւորել նըրանց, չնշել արտօնութիւնները, հաւասարութեան սկզբունքներ մտցնել ազգաբնակութեան զանազան խաւերի մէջ: Ֆրանսիայից փախած բողոքականները արտասահմանում հրատարակում են բազմաթիւ գրուածքներ, որոնց մէջ անխնայ քննադատութեան են ենթարկուում Ֆրանսիայի կարգերը, լուգովի-

\*) Ж. Пелисье, „Литературное движение въ XIX столѣтии“, М. 1895, եր. 13.

կոսի եզուփական քաղաքականութիւնը։ Դրանց մէջ յայտնի է մանաւանդ Բէյլ. նա ժողովրդական պատահանջ է դարձնում հանրամատչելի ամսագիրը, որի միջոցով ահագին ազգեցութիւն է գործում ընթերցող հասարակութեան վրայ։ Բայց աւելի նշանաւոր էր նրա փիլիսոփիայական բառարանը. շատ չեն այն տեսակ գրքերը, որոնք սրբ պէս մեծ ներդրութութիւն ունեցած լինէին մտքերի վրայ։ Ի՞նչ էր քարոզում Բէյլ։ Դեռ 1682 թուականին հրատարակած իր մի աշխատութեան մէջ նա ասում էր թէ անհաւատութիւն մերժելը աւելի լաւ է, քան նախապաշարմունքը. ուստի պետութիւնը պարտաւոր է համբերող լինել ոչ միայն բոլոր կրօնների, այլ և անհաւատների վերաբերմաք։ Բողոքականներին ֆրանսիայից արտաքսելու առիթով Բէյլ գրում էր. «Այս բռնութիւնները տեսնելով, ի՞նչ պէտք է մոտածել քրիստոնէութեան մասին, չը պէտք է կարծել թէ դա արիւնարբու մի կրօն է, որ խղճի ազատութիւնը կատարելապէս ճնշելու համար չէ վախում նոյն իսկ ստութիւնից և խարէութիւնից, երդմանազնցութիւնից, բռնութիւններից, դահիճներից և ինքվիլիցիայից» \*)։

Մի և նոյն ժամանակ գեղարուեստական գրականութեան մէջ է խուժում ժողովրդի ողին։ կլասիքական չոր ու ցամաք թխուածքները տեղի են տալիս հէքեաթներին, որոնք վերցընւում են ժողովրդի միջից, թարմութիւն են բերում իրանց հետ։ Հէքեաթը փոխում է վէպի, որի հիմքը նոյն ժողովրդական իրականութիւնն է։ Զարգանում է երգիծաբանական վէպը, գրականութիւնը վերացական, անմարմին երևոյթներից երես է գարձնում և զնում է ժամանակակից կեանքի, նրա երևոյթների, նրա զրական և բացասական կողմերի հետ։

1715 թուականին մեռաւ Լուգովիկոս ԽՎ։ Ծայրայեղ բռնապետութեան ստեղծած կեղծաւորութեան և փարիսեցիութեան քողը, որի տակ ծածկուած էին հասարակութեան արատներն ու խոցերը, պատուեց։ Եկեղեցին ու հաւատալիքները արգէն հիմքից ցնցուած էին։ Ժողովուրդը, լսելով իր թագաւորի մահը, ուրախութեան ցոյցեր էր անում։ Նրան միայն ուրախացնել կարող էր այն մահը, որ վերջ էր դնում այնքան երկարատև և այնքան անխիղճ թագաւորութեան։ Պատերազմներից, ներքին հալածանքներից քանդուած և աղքատութեան դուռը հասած ֆրանսիան բաց է անում աչքերը, նայում է իր բազմաթիւ վէրքերին և ոկտում է նրանց բժշկութեան մասին

\*) Գետներъ, տ. II, եր. 39.

մտածել: Այդ բժշկութիւնը տանում է նրան վերանորոգութեան ճանապարհով, որ վերջը պիտի հասցնէր մեծ յեղափոխութեան: Մի կուդովիկոս աւելի քան բաւական էր, որ բռնակալութիւնը ատելի և զգուելի դառնայ ֆրանսիացու աչքում և որոնել տայ աղատութիւն: Կուսաւորութիւնը առաջնորդում է նրան այդ ճանապարհին: Գրականութիւնը մեծամեծ քայլեր է անում, պատրաստում է մի ժողովուրդ, որ հրաբուխին ժամբարմանը պիտի ցնցէր Եւրօպան:

Դա ահազին նշանակութիւն ունէր ամբողջ մարդկութեան համար: Ֆրանսիական լեզուն տարածուած էր ամեն տեղ, ուրեմն և մի շատ գեղեցիկ գործիք էր՝ նոր գաղափարները ըստ հանրացնելու համար: Գեղեցիկ գործիքը տաղանդաւոր գործադրողներ էլ ունեցաւ. երեսն եկան ժողովրդականացնելու, հասարակութեան հետ մի դիւժիչ, կրակոս լեզուով խօսելու փայլուն ընդունակութիւն ունեցող ֆրանսիացի զրոյներ, որոնք XVIII դարի փառքն ու հոչակն են կազմում: 1726 թուականին Անդիքա ուղեւորուեց և այնտեղ երկը տարի ապրեց հոչակաւոր Վուտէր. նրանից յետոյ նոյն տեղը գնաց Մօնտեվրիէ, միւս հոչակաւոր ֆրանսիացին: Մինչև այդ ճանապարհորդութիւնը Վուտէր արդէն մի քանի անգամ բանտ էր նստել իր համարձակ, կծու ոտանաւորների համար, իսկ նրա գրուածքները, որոնց մէջ ժամանակի նոր մարդը մտրակում էր ֆանատիկոսութիւնը, կրօնական համբերողութիւն և ազատութիւն էր պահանջում, արգելուել էին: Իսկ Մօնտեվրիէ հրատարակել էր իր հոչակաւոր «Պարակական նամակները», մի վէպ, որի մէջ, երկու պարսիկների անունից գրուած նամակների ձևով, անինայ ծաղրի և քննադատութեան էին ենթարկուում ֆրանսիայի հասարակական, պետական կարգերը, կրօնական ուղղափառութիւնը, պաղականութիւնը, վանքերը, կուսակրօնութիւնը: Զէր ինսյոււծ նոյն իսկ քրիստոնէական վարդապետութիւնը: Արտօնուած դասակարգերը, կուդովիկոսի վարչական իդէալները, բարերի վայրենացումը, նրբացած կրթութեան և շոայլութեան անհեթեթութիւնները, ժամանակակից գիտնականութիւնը—ոչինչ, ոչինչ չաղատուեց Մօնտեվրիէի անողորմ մտրակից: Դա մի կատարեալ պատերազմ էր, որ յայտարարում էր նախապաշարմունքների, հնութեան, անբարյականութեան, բռնակալութեան դէմ, մի պատերազմ, որի մէջ ժողովրդական ողին մի ապշեցուցիչ ուժով էր հանդէս գալիս: Եւ հասկանալի է թէ ինչ ընդունելութիւն պիտի դանէր գիրքը: Յարձակումները անօրինակ և անլուր էին իրանց խստութեամբ: Նրանք կարգացուում էին յափշտակութեամբ: «Պարսկական նամակների» շատ նախադատութիւններ առածների ձև ստացան:

Անգլիայում ռեկու մեծ հեղինակները շատ բան սովորեցին. նրանք տեսան թէ ինչ է ազատութիւնը, ինչ է սահմանադրական կառավարութիւնը. ծանօթացան անգլիական գիտութեան և գրականութեան և վերադառնալով հայրենիք, մշակեցին, զարգացրին, ժողովրդականացրին այն ամենը, ինչ սովորել էին Անգլիայում: Մօնտեպքիէ անձնատուր եղաւ գիտնական հետազոտութիւնների, որոնց մէջ, սակայն, մնաց ժամանակի մարդ, առաջաւոր գաղափարների քարոզիչ: Նա գրում է «Խորհրդածութիւններ հումայնեցինների և նրանց պետութեան մեծութեան և անկման մասին» ու գրանով դառնում է նորագոյն պատմագրութեան հայր: Մինչև այդ պատմագրութիւնը գտնւում էր աստուածաբանների, իրաւաբանների, չոր ու ցամաք գիտնականների ձեռքին. Մօնտեպքիէ մացնում է նրա մէջ հոգի, ապացուցանում է որ ազգերի ճակատագիրը այս ու այն պատահարից, այս ու այն հզօր անձնաւորութեան կամայականութիւններից չէ կախուած, այլ կազմւում է հասարակական և պետական կարգերից և բարոյական, բնական պայմաններն են, որոնց պէտք է որոնէ պատմագիրը ու ամբողջացնէ մի ազգի պատմական շըրջանները: Բացի այս գիտնական նոր, քննադատական ձեի, որ Վօլտէրի ձեռքով մտցրուեց ու հաստատուեց պատմագրութեան մէջ, Մօնտեպքիէ հումայնեցինների օրինակով դաս էր տալիս իր հայրենակիցներին, սովորեցնում էր թէ ինչ է ծշմարիտ հայրենասիրութիւնը, թէ ինչպէս մի ազգ բարձրանում է, երբ աղատէ, և ընկնում է, երբ բարբարոս բռնակալութիւնն է տիրում: «Օրէնքների ողին» աշխատութեան մէջ Մօնտեպքիէ համդիսացաւ անգլիական վարչական կարգերի երկրպագու, պարզեց օրինականութեան, ծշմարիտ ազատութեան, մարդկային իրաւունքների վրայ հաստատուած պետութեան իդէալները: Դրանով էլ նա դարձաւ ազատամտութեան հայր, իսկ պետական գործիչների համար «Օրէնքների ողին» մի դպրոց դարձաւ, որին դիմում են մինչև այժմ:

Վօլտէրի գրական և գիտնական գործունէութիւնը չէ կարելի ամփոփել մի թուուցիկ տեսութեան մէջ: Այդ հսկայ խելքը բեղմնաւոր ու անխոնջ էր մինչև խորին ծերութիւնը: Հասնելով գրական վառքի գագաթնակէտին, նա տիրապետում էր իր ժամանակակիցների խելքի ու սրտի վրայ: Նրա երկրպագուների թւում կային նոյն իսկ թագակիր անձինք (պրուսական թագաւոր Ֆրիդրիխ, ուսւաց կայսրուհի Եկատերինա Մեծ), որոնք երկար տարիներ նամակագրութիւն ունեին նրա հետ, իրանց հիացմունքն էին յայտնում այդ գրական թագաւորին: Անկեղծ հիացմանքների, ընդհանուր համակրանքների ու յար-

գանքների հետ լսւում էին, ի հարկէ, և անէծքներ, ատամների կրճառոց: Ո՞ւր ասէք որ չը գործէր այդ միշտ եռանդոտ, կուռող, անխնայ ծաղրող մեծ մարդու գրիչը: Բանաստեղծութիւն, փիլիսոփայութիւն, վիպագրութիւն, երգիծաբանութիւն, թատերագրութիւն, պատմագրութիւն—ամեն տեղ էր Վօլտէրը և միշտ մի և նոյնը—ազատութեան երգիչ, արդարութիւն և իրաւոնք պահանջող, նախապաշարմունքների, մոլորութիւնների, տղիւտութեան անհաշտ թշնամի: Վօլտէրն էր, որ ձևակերպեց նոր մարդկութեան իդէալը—«ազատութիւն և հաւասարութիւն», բառեր, որոնք գծագրուեցին ֆրանսիական մեծ յեղափոխութեան դրօշակների վրայ և որոնք այժմ՝ էլ լուսաւոր մարդկութեան քաղաքական դաւանակն են կազմում: Անողոք, առաջ ու երկար էր նրա կոփէր մանաւանդ եկեղեցու գէմ. ապչեցող համարձակութեամբ նա մերժում էր քրիստոնէութիւնը և դրա համար էլ անաստուած հոչակուեց եկեղեցականների կողմից: Բայց նա անաստուած չէր. նրա աստուածը անգլիական փիլիսոփաների աստուածն էր—բանականութիւն, խելք, առողջ դատողութիւն:

Մինչդեռ հանճարեղ ֆրանսիացին ամեն ինչ քանդում, աւերակ էր գարճառում և այդ աւերակների վրայ իր անողորմ, ոչնչացնող ծալքն էր հնչեցնում, դուրս եկաւ մի ուրիշ մարդ, որ միայն քանդել չը գիտէր, այլ և նոր, գեղեցիկ աշխարհայեցողութիւններ կառուցանել: Ժան Ժակ Ռուսսոն էր դա, այն հանճարեղ միաքը, որ թովում էր իր ժամանակակիցներին սրտի խորքից բղխող խօսքով: Սա ինքնուրոյն, նոր ուղղութիւն էր, որ գալիս էր դիմադրելու XIX դարի փիլիսոփաններին և նրանց քարոզների տեղ մաքուր ժողովրդասիրութիւն, ուամկավարական-հանրապետական կարգեր հրատարակելու: Շուստոն մարդկային թշուառութիւնների պատճառը որոնում էր քաղաքակրթութեան, գիտութեան մէջ. քարոզում էր վերադառնալ «բնական դրութեան», այն ժամանակներին, երբ մարդը ազատ էր, երբ չը կային իշխող և ստրուկ դասակարգեր և ամենքը հաւասար էին: Ժողովուրդը պիտի լինի իր վիճակի տնօրէնը, միայն նա իրաւոնք ունի հրատարակել օրէնքներ: Հողը ոչ ոքին չէ պատկանում, իսկ պտուղները պատկանում են ամենքին: Նոր սերունդի կրթութիւնը հիմնուած պիտի լինի բնութեան դասերի վրայ. ազնուացնում, իսկական բարօրութեան է հասցնում այն կըրթութիւնը, որի մէջ դրուած է բնութեան աւետարանը, որ հաղորդում է աշակերտին սրտի կրօնը: Քննադատելով ժամանակակից գիտութիւնը, բարոյական հասկացողութիւնները, կրօնը, Շուստոն ապացուցանում էր այդ բոլորի անանկութիւնը: Իր գաղափարներին հաւատարիմ մնալով, նա փառքի ետեից շընկաւ.

մերժեց իրան առաջարկուած պալատական շնորհները, ապրում էր իրեւ բնութեան մարդ և մեռաւ աղքատութեան մէջ։ Բայց նրա փիլիսոփայական գրուածքները, վէպերը նոր հօրիզօններ էին մարդկութեան աչքի առաջ, ստեղծեցին պետական և հասարակական իդէալներ, որոնք անմիջապէս մտան կեանքի մէջ։ Յեղափոխութեան գործիչները նրա գրքերն ունէին իրանց ձեռքում, փողոցներում կոռուպների մէջ Ռուսսօի անունն էր հաջում։

Թողնենք ֆրանսիական ուրիշ գրողներին, թողնենք քաղաքատնտեսական և այլ գրական գիտութիւնների ասպարեզում գործողներին, մի հայեացք ուղղենք դէպի Եւրօպայի միւս կողմերը։

Ֆրանսիական ազատարար լուսաւորութեան ազգեցութիւնը ահագին էր։ Հետանէր իր «Պատմութիւն XVIII դարի ընդհանուր գրականութեան» անունով գեղեցիկ աշխատութեան մէջ այսպէս է բնորոշում այդ ազգեցութիւնը. «Ամեն տեղ զգացում է գարնան թարմ շունչը։ Նոր նպատակներ և նոր յոյսներ։ Ամեն տեղ անխոնջ մրցութիւն և ձգտում դէպի առաջ, դէպի մաքուր և կատարեալ մարդկայնութեան նպատակը» \*). Սկսւում են վերանորոգումներ պետական կեանքի մէջ և սկսողները թագաւորներն ու մինիստրներն են. ժողովուրդների պահանջները չեն, որ հարկադրում են նրանց մտածել բարենորոգումների մասին, այլ գարի լուսաւորութիւնը, գրականութիւնը։ Գերմանիան մտաւոր ինքնուրոյն վերածնութեան հանդիսարան է զանուում։ Կանար քննական փիլիսոփայութեան հիմքն է դնում, Լեսսինգ գեղարուեստական կրթիկայի հայր է դառնում. ծաղկում է ազգային գրականութիւնը, ծնւում են Գէօթէի և Շիլերի նման հակայ ստեղծագործներ։ Սպանիան անգամ, չը նայած իր խեղճութեան, վերածնուելու նշաններ է ցոյց տալիս։ Բայց ֆրանսիական լուսաւորութիւնը ազդու եւ կենդանարար է մասւանդ իտալիայում։

Այդտեղ Վօլտէրը, Մօնտեպիէն նոր դարագլուխ են բաց անում։ Վերածնութեան հայրենիք Խտալիան մի ժամանակ ինքն էր լուս տարածում Եւրօպայի մէջ, օրինակ և ուսուցիչ էր հանդիսանում ազգերի համար։ Բայց վերածնութիւնից առաջացաւ Լիւթէրի Ռէֆօրմացիան, կաթոլիկութիւնը սկսեց խաւար յետագիմութիւն, ճնշեց ոչնչացրեց Խտալիայի մտաւոր առաջադիմութիւնը, և Դանստէի ու Պետրարկայի հայրենիքը երկար նստած էր խաւարի մէջ։ Այժմ, երբ Հոօմի՛ բռնապետութիւնը այնպիսի ահեղ հարուածներ էր ընդունում, երբ լայն հոսանքներով բա-

\*). T. II, Եր. 498.

նականութիւնն ու քննադատութիւնն էին տիրում մարդկանց մտքերի վրայ, իտալիան աշակերտում է Ֆրանսիային և մտնում է նոր օրերի մէջ: «Ամեն տեղ—ասում է նոյն Հետոնէր—առպարէզ են գալիս աղնիւ և լուսաւորուած մարդիկ, որոնք դէպի մարդիկ ունեցած իրանց խորին սիրուց դրդուած՝ ձգտում են հասցնել ժողովուրդը ազատութեան և բարօրութեան. մարդիկ են դրանք, որոնք ողենրուած են յարգանքի արժանի եռանդով, աշխատում են նոր գաղափարների մեծամեծ նուաճումները դարձնել հիմք և ղեկավար՝ կեանքին սաստիկ անհրաժեշտ բարեփոխութիւնների համար»:

Միլան և Նէապոլ գաղաքները այդ նոր հոսանքների կենտրոններն են գառնում: Զարգանում է քաղաքատնտեսական գիտութիւնը, նշանաւոր գրուածքներ են նուիրուում իրաւարանական հարցերին և դրանց մէջ արդարութեան, իրաւունքի, ազատութեան պահանջներն են դրուած: Բարեկարգուած կեանքն է այն իրէալը, որով վառուած են այդ աղնիւ գործիչները. Նրանց ամբողջ ձգտումն է զառնալ ժողովրդի ուսուցիչ, այս բառի ամենալայն մտքով, դառնալ նրա բախտի պատճառ: Նրանք ուզում են զիտութեան լուսով լուսաւորել մի օրէնսդրութիւն և վարչական ձե, որոնք վայել են ազատ և իր արժանաւորութիւնը հասկացող մարդկութեան \*):

Գիտութեան հետ ձեռքի տուած՝ առաջ է գնում բանաստեղծութիւնը, որ զիխաւորապէս ֆրանսիական ազդեցութեան տակ է, բայց իտալական վերածնութիւնն է երգում: Թէ հանրապետական գաղափարներով տոգորուած Ալֆիերին և թէ նրանից պակաս նշանաւոր բանաստեղծները գործ են գնում իրանց տաղանդի ամբողջ ոյժը, որ զարթեցնեն իտալացիներին, հասկացնեն նրանց թէ որքան ցած են ընկել նրանք, որքան ամօթալի է նրանց զրութիւնը: Եւ զուր չէին նըրանց աղնիւ ջանքերը. Իտալիայում ծնում է ազատութեան գաղափարը, որ իրագործուում է XIX դարում «Երիտասարդ իտալիա» կուսակցութեան ձեռքով: Այս կուսակցութեան նախահայրը Ալֆիերին է, մի բանաստեղծ, որ վարդի ու սոխակների երգերով չէր կերակրում իր հայրենակիցներին, այլ քարոզում էր գաղաքական ազատութեան և վերածնութեան մտքեր...

Ահա այսպէս էր Եւրօպան XVIII դարի ընթացքում: Այսպէս էր ժամանակը, երբ մի հայ ընկերակցութիւն, զիմնլով Եւրօպա, յանձն է առնում միջնորդի գեր կատարել նրա և հայերի

\* ) Գետիեր, տ. II, եր. 499.

մէջ։ Դա մի շատ ծանր, պատասխանատու պաշտօն էր, մանաւանդ եթէ ի նկատի առնենք որ երկար ժամանակ, համարեա մի ամբողջ դար (մինչև XIX-ի կէսը), Միիթարեան միաբանութիւնն էր հայ ազգի գլխաւոր դաստիարակիչը, միակ հեղինակաւոր մարմինը, որի միջոցով եւրօպական լոյսը անցնում էր դէպի մեղ։

Ի՞նչպէս է միաբանութիւնը կատարել միջնորդի դերը։ Սա մի շատ կարևոր հարց է, որի լուծումը ցոյց կը տայ մեղ, թէ ինչ էր հայ ազգը վերջին երկու դարերի ընթացքում և ինչ կարող էր լինել։ Դիմենք երկու կողմերին էլ, որոնց մէջ միջնորդ էր միաբանութիւնը, և հարց տանք՝ ինչ էր այդ միջնորդը նրանց համար։

Վերցնենք նախ մի կողմը—Եւրօպան։ Դա լուսատու կողմն է, գիտութեան և առաջադիմութեան այն շեմարանը, որից շատ կամ քիչ բան վերցնելու մէջ էր մեր ամբողջ երջանկութիւնը։ Ի՞նչ կ'ասէ Եւրօպան այդ միջնորդի մասին։

Մենք արդէն ճանաչում ենք նրա ոդին, նրա ձգտումները։ Ուստի առանց տատանուելու կարող ենք ասել, որ առաջադէմ, մաքերի և հասկացողութիւնների մէջ այնքան խոր և լայնատարած յեղափոխութիւններ մոցրած եւրօպականութեան համար Միիթարեան միաբանութիւնը մի կատարեալ յետադիմութիւն էր, մի մեծ խոչընդուռ, որի երևան դալը ոչ միայն չէր կարող բախտ համարուել մի ազգի համար, այլ ուղղակի պիտի նկատուէր իբրև գերախատութիւն։

Եւ իրաւ, Հոօմի քթի տակ ապրող և Հոօմի հրամաններին ու բարիքներին աչք տնկած մի վանական միաբանութիւն, որի ընտրած մի ծիւլն էլ միսիօնարական գործունէութիւնն էր հայերին պապական զարձնելու համար, չէր կարող համապատասխանել Վոլտէրի դարի պահանջներին, — մի իրողութիւն է սա, որ ապացոյների կարօտ չէ։ Այստեղից առաջանում է Միիթարեան միաբանութեան վրայ ծանրացած ճակատագիրը。—որքան էլ չնորհալի և տաղանդաւոր անդամներ ունենար նա, բայց իբրև զուտ կղերական մի հիմնարկութիւն, պիտի միշտ յետ մնար ժամանակից, միշտ ներկայացնէր յետադէմ, հնադարեան պահպանողականութիւն և այդպիսով առաջադիմութեան խոչընդուռ հանդիսանար։ Միաբանութիւնը, ճիշտ է, Եւրօպական գրականութիւն մոցրեց մեր մէջ։ Բայց ինչ տեսակ գրականութիւն։ XVIII դարում մենք աւելի եռանդով ենք սկսում կերպակրուել միջնադարեան գրքերով, որովհետեւ ու Ղաղարի վանքը միայն այնպիսի գրքեր կարող էր թարգմանել, որոնք Հոօմի ինդէքսի

մէջ բազմելու պատիւը չունէին, այսինքն գրքեր, որոնք նոր, ազատ մտածողութեան հոտն անգամ չունէին:

Մի վանքի համար դա շատ բնական էր: Բայց մենք վանքի տեսակէտից չը պիտի նայենք Մխիթարեաններին, այլ այն ծանր դերի տեսակէտից, որ նրանք յանձն էին առել կատարելու—մի խաւար, կրօնամոլ և ստրուկ ժողովրդի տեսակէտից: Լոկկ, Մօնտեվդիէ, Դիզրո, Ռուսսօ և նրանց բազմաթիւ հետևողները այնպէս էին ներգործում ժամանակակից մարդկութեան խելքի վրայ, որ, ինչպէս գեղեցիկ կերպով բնորոշեց Հետանէր, ամեն տեղ գարնան թարմ շունչն էր զգացուում, ամեն տեղ ծաւալուում էին նոր նպատակներ և նոր յօյսեր: Մեղ համար այդ գարունը չէր բացուել, մենք, միշտ է, Մխիթարեանների առաջնորդութեամբ մանում էինք մի նոր շրջան, բայց դա ազատ, ինքնամանաչ եւրօպականութեան նոր նպատակների և նոր յօյսերի շրջանը չէր: Նոր մարգարէններից ոչ մէկն էլ չը թարգմանուեց հայերէն: Խոր, վերլուծող քննադատութեան և բանականութեան ձայնը չը հասաւ մեր ականջներին, դրա փոխարէն մենք Վենետիկից առատութեամբ ընդունում էինք միջնադարեան սխուլաստիկ աստուածաբանների փիլիսոփայութիւնները:

Ո՞րպիսի անհրապոյր բախտ: Ազատարար Լուսաւորութեան Դարում Մխիթարը մեզ մատակարարում է ԽIII դարի հեղինակ Ալբերտ Մեծի աստուածաբանութիւնը, և մատակարարում է իբրև մեղր ու կարագ, իբրև մի հոգնոր կերակուր, որից կշանալ չէ կարելի: Թերթում ենք մինչև ԽVIII դարի վերջերը Վենետիկում լոյս տեսած լուրջ, թարգմանական գործերը, որոնց վրայ կրթուել են սկսում սերունդներ: Մխիթարանները մեզ փիլիսոփայական գրքեր են տալիս, սովորեցնում են մեզ վերացական մտքերին: Բայց դա նոր ժամանակների փիլիսոփայութիւնը չէ, այլ այն, որ IV դարից գարձաւ աստուածաբանութեան ստրուկ: Թօմա Ակուխնացին, Ալբէրտ Մեծի աշակերտը, որ կաթօլիկ սուրբերի թւումն, է դասուած՝ ինկվիզիցիան և պապական միապետութիւնը պաշտպանող իր գարդապետութեան պատճառով, գիտութեան և լուսաւորութեան միակ աղբիւրն է Մխիթարի և նրա յաջորդների համար: Թարգմանուում են Ակուխնացու գրուածքների զանազան չափի և մեծութեան բացատրութիւնները, թարգմանուում են եղութա աստուածաբանների և այլ կաթօլիկ կրօնաւորների մտածողութիւնները, խրանները, որոնք և ամենայն եռանդով առաջարկւում են մեզ՝ հոգի փրկելու համար: Խոկ այն ձայները, որոնք որոտում էին Եւրօպայի բոլոր կողմերում կրօնական և քաղաքական բռնապետութեան դէմ, որոնք ծաղրում էին քարացած ծիսապաշտութիւնը, սխոլաս-

տիական զառանցանքները, մեզանից շատ և շատ հեռու մնացին:

Ուրիշ կերպ, ի հարկէ, չէր էլ կարող լինել: Միսիթարեան միաբանութիւնը—վանականութեան կատարեալ յաղթանակն էր հայերի մէջ: Մենք ունենաք բազմաթիւ վանքեր, որոնց մէջ ծոյլ ու հացկատակ մի գասակարդ էր ապրում: Նա տգէտ էր, թաղուած նախապաշարմունքների և անշարժութեան մէջ, նա ոչընչով չէր զանազանւում հասարակ ամբոխից: Գտնւում է այդ դասակարգի մէջ անբաւական տարր, որ աշխատում է նախ տեղն ու տեղը, հայրենի հողի վրայ, բարեկարգել վանականութիւնը, դարձնել նրան գիտուն ու պատրաստ, և երբ այդ չէ աջողութ, երբ տենչերը և փորձերը խեղդւում են երկաթի ծանրութեամբ նստած իրականութեան մէջ, այդ անբաւական տարրը պոկ է գալիս հայրենիքից, անցնում է Եւրոպա, այդտեղ գտնում է զարգանալու նպաստաւոր հող և սկսում է մի զարմանալի բեղմնաւոր գրական գործունէութիւն, մնալով, սակայն, այն, ինչ էր —վանականութիւն: Այսպէս էր Միսիթարեան միաբանութիւնը —հայ վանականութեան գերագոյն զարգացումը: Նա կարող էր շատ ծաղկեցնել աստուածաբանութիւնը, կարող էր կրօնական գրքերի մի անսպառ հարստութիւն ստեղծել Եւ եթէ ամբողջ հայ աղջը պատկառանքով գլուխ իջեցրեց նրա առջե, սկսեց աշակերտել նրան, պատճառն այն չէր, որ նա ներկայացնում էր ժամանակակից գիտութիւնը, դարի լուսաւորութիւնը, այլ այն, որ չը կար նրա նման մի ուրիշ զարգացած ու գիտուն կրթական և գրական մարմին: Վանականութիւնը, հասնելով մտաւոր առաջադիմութեան մի աստիճանի, որի նմանը մեր մէջ դեռ չէր եղել, երկար ժամանակով իր ձեռքն էր առնում ամբողջ ազդի կրթութեան մենաշնորհը: Խակ սա յետադիմութիւն և դժբախտութիւն էր աշխարհական այն լուսաւոր գիտութեան տեսակէտից, որ ողողել էր ամբողջ արևմտեան աշխարհը:

Այս դրութիւնը աւելի պարզ կը լինի մեզ համար, եթէ հետեւնք Միսիթարի ներքին քաղաքականութեան, եթէ անսնենք թէ ինչպէս նա կազմակերպեց իր միաբանութիւնը, ինչ հոգի դրեց նրա մէջ:

Միսիթարեան միաբանութեան անդամները պատրաստուում են հէնց միաբանութեան մէջ. դրսից ոչ ոք չէ ընդունւում: Անդամներ պատրաստողը դպրոցն է, որից էլ սկսեց Միսիթարը: Օտարներից դպրոցը աշակերտ չէր ընդունում. ամենն ինչ գուտ հայկական էր: Ի՞նչ էր այդ դպրոցը:—Միսիթարը նրան հաղորդեց մի թունդ կրօնական ոգի: Առաջին և ամենագիտաւոր նպատակը եկեղեցու պաշտօնեայ պատրաստեն է, ուստի իւրաքան-

շիւր աշակերտ նախ և առաջ պիտի կրօնական հիմնաւոր կըրթութիւն ստանայ: Հիմնաքարը, սկիզբը և վերջը աստուածաբանութիւնն է: իսկ մնացած գիտութիւնները: Մեր վանականութիւնը շատ հնուց էր յատկացրել նրանց արտաքին անունը, այսինքն դրսի, հեռուցի եկուոր, երկրորդական: Մխիթարն էլ —իզուր չէր նա ճգնաւորական գաղափարներով սնուել—այդպէս նայեց այդ գիտութիւններին, տուեց նրանց կողմնակի նշանակութիւն, աստուածաբանութեան ստրուկ դարձրեց: Նա մեղք չէր համարում, որ աշակերտները սովորեն և այդ գիտութիւններից, բայց հարկաւոր էր պատշաճաւոր զգուշութիւն, այսինքն որ գիտութիւնները կղերական հասկացողութեամբ աւանդուեն, այն չափով, ինչ չափով հնարաւոր էր համարում եկեղեցականութիւնը: Մխիթարի կենսագրութիւնը պատմում է մի շատ բնորոշ գէպք: Տեմնում է նա որ իր աշակերտներից մի քանիսը չափից դուրս ուշադրութեամբ և աշխուժով են ուսումնասիրում գիտութիւնները: Նա վախենում է թէ մի գուցէ այդպիսով թուլանայ նրանց մէջ աստուածապաշտութեան եռանդը և հաւաքում է ամենքին, սկսում է ցոյց տալ ուղիղ ճանապարհը: Ասում է որ ամեն մէկը պիտի իր ճախակողմում ունենայ Աստուածաշունչը և Թօմա Կեմպացու գիրքը, իսկ աշակողմում—աստուածաբանութիւն և փիլիսոփայութիւն (խօսքը, ի հարկէ, եկեղեցական փիլիսոփայութեան մասին է): Ապա յանդիմանում է աշակերտներին, որ նրանք այդքան սիրով նըւիրում են գիտութիւնների ուսմունքին և պարզ ցոյց է տալիս թէ այդ «մոլեկան լիղձերից» որքան անկարգութիւններ են առաջ գալիս և որքան նուազում է աստուածապաշտութիւնը \*):

Երիտասարդական աշխոյժը սանձահարելու համար Մխիթարը խիստ հսկողութիւն էր հաստատել վանքում: Նա զիտէր որ ժամանակը շատ վտանգաւոր է վանականութեան տեսակետից և չէր քաշում նոյն իսկ անձամբ լրտեսելու պաշտօնից: Հենց որ իմանում էր թէ երկու-երեք հոգի հաւաքուել են միասին, յանկարծակի գնում էր նրանց մօտ, որպէս զի իմանայ թէ ինչի մասին են խօսում հաւաքուածները: Պարզ է, որ այդպիտի խիստ հսկողութեան տեղում ամեն մէկից պիտի պահանջուէր անպայման, կոյր հնազանդութիւն: Եւ Մխիթարը այդ կողմից էլ միանգամայն անողոք էր, նոյն իսկ անգութ: Մի անգամ նրա աշակերտները պատրաստում են մի շատ զեղեցիկ գործ: Դա մի մեքենայ էր, որ ձևացնում էր երկրագունդը, երկ-նային մարմինները, լուսնի և արեգակի շրջանները. ժամացոյցի

\*). Աղոնց, եր. 199:

անիւներով այդ զարմանալի գործիքի զանազան մասերը իրանք իրանց շարժւում էին, ցոյց տալով այն, ինչ գիտութիւնն էր հաստատել: Աշակերտաները ինդրում են Մխիթարին գալ գործը և տեսնել իրանց ձեռքի գործը: Գալիս է Մխիթարը, գովում է նրանց, բայց վերադառնալով իր սենեակը, ուսուցչի միջոցով յայտնում է աշակերտաներին որ եթէ նրանք կամենում են իրանց արբանօր համար մի հաճելի բան անել թող իրանց ձեռքով խորտակեն և կրակի մէջ գցեն այդ մեքենան: Հասկանալի է թէ ինչ պիտի լինէր խեղճ աշակերտաների գրութիւնը. այնքան երկար աշխատել էին, այնքան լաւ գործ էին պատրաստել և յանկարծ, մի ակնթարթում, պիտի ոչնչացնեն իրանց ձեռքի և խեղի պատուղը: Բայց և այդպէս, նրանք կատարում են արբանօր ցանկութիւնը: Մխիթարը, սաստիկ ուրախացած, գնում է նրանց մօտ, օրհնում է, հասկացնում որ այդ հնազանդութեան վրայ Աստուած էլ է ուրախացած: Այս զարմունքով Մխիթարը անպայման, հու հնազանդութեան դաս էր տալիս իր աշակերտաներին: Խնչակ երեսում է, նա շատ լաւ խւրացրել էր կաթօփեկական վանքերի ներքին պայմանները, և մենք պիտի զարմանանք թէ ինչպէս նա կարողացաւ այդ վանքերի հոգին կազմող հնազանդութիւնը պատուաստել և աճեցնել հայերի մէջ, որոնք այնքան էլ սովոր չեն դիսցիպլինալին, հնազանդութեան: Մի հնազանդութիւն էր դա, որ մանաւանդ պիտի չափաւորէր աշակերտաների սէրն ու ձգտումը դէպի գիտութիւն: Կենսագրութիւնը պատում է որ զարմանալի մեքենան պատրաստողները այն աշակերտաներն էին, որոնք «դեռ ևս փիլիսոփիայութեան վարժմունքների մէջ էին»: Շատ բնական էր, որ Մխիթարը, խորտակել տալրվ այդ ձեռագործը, կամենում էր դրանով ցոյց տալ թէ որքան անախսործ բան է իր համար, որ իր աշակերտաները, փոխանակ թօմա Ակուխնացու վարդապետութեան մէջ քաջ և հասկացող հանդիսանալու, աշխարհային գիտութիւնների մէջ են առաջադիմութիւն ցոյց տալիս Յամենայն դէպս, եթէ աշակերտաների ձեռագործը լինէր մի եկեղեցական անօթ, պատկեր կամ զգեստ, Մխիթարը նրան կրակի չէր դատապարտի...»

Անհնազանդութիւնը միայն խրատներով չէր սանձահարւում, սահմանուած էին և պատիմներ: Ս. Ղազարի կղզու առանձնութիւնը գեղեցիկ միջոց էր՝ վանականներին կեանքից և աշխարհից միամնամայն կարելու համար: Կենսագրութիւնը պարծանքով յիշատակում է թէ երբէք տեմսուած չէ որ վանքի միաբանութեան անդամները դատարկ տեղից շրջեն Վենետիկի փողոցներում, կամ նայեն այսեղ եղած «քաղաքական խաղերին»: Այսպիսի առանձնացումը, անշուշտ, ունէր իր կարեսրու-

թիւնը վանական հաստատութեան յարատենութեան տեսակէտից: Բայց նա ունէր և բազմաթիւ բացասական կողմեր: Վանքը դառնում էր մի միջավայր, ուր ոչնչացած էր անհատական կամքը, ազատութիւնը, ուր ամեն ինչ պիտի հպատակուէր սահմանուած կարգերին և աւանդութիւններին: Այդ է պատճառը որ Մխիթարեանների դարաւոր գործունէութեան մէջ աչքի է զարւում նեղ միակողմանիութիւնը, ազատ ու անկախ մաքի բացակայութիւնը:

Հարկաւոր է աւելացնել որ Մխիթարի աբբայութեան ժամանակամիջոցը դեռ լաւագոյնը և օրինակելին է համարւում միաբանութեան պատմութեան մէջ: Այդ ժամանակամիջոցում վանքի կանոնադրութիւնը պարզ էր, այն աստիճան չէր տոգորուած կաթոլիկ վանքերի ոգով: Սա հասկանալի է: Եթէ իւրաքանչիւր երկարակեաց մարմին իր կեանքի մէջ ունենում է հասկետական շրջան, Մխիթարեան միաբանութեան համար այդ շրջանը Մխիթարի աբբայութեան ժամանակն էր: Ինքը, Մխիթարը, կրթուել ու մեծացել էր կաթոլիկ վանքի պատերից գուրս, հայրենի հողի վրայ, նա ճանապահորդել էր հայոց աշխարհի շատ կողմերը, մի խօսքով կրում էր իր վրայ հայրենի հողի, օդի, իրականութեան ազդեցութիւնները: Բայց ահա և Ղազարի վանքում սերունդների յաջորդութիւն է սկսում: առաջ է գալիս միջավայրի հետ կապուած դրութիւնը, բաղկացած աւանդութիւններից, նախապաշարմունքներից, կրթութեան պակասութիւններից և, վերջապէս, արտաքին հանգամանքների ազդեցութիւններից: Խտանում է կաթոլիկական աւանդապահութիւնը, լուսավախութիւնը այդ մենաւոր կղզու վրայ, սեղմելով աղատ մաքի ու գործունէութեան առանց այն էլ անձուկ ասպարէզը: Մխիթարի մահից յետոյ Հռօմը այլ ևս աւելորդ է համարում նորակազմ միաբանութիւնը արտանութիւններով և քննչութիւններով փայտիայելը և ուղղակի հրամայում է նրան ընդունել եղութափական կարգի կանոնադրութիւնը: Մխիթարեանները ընդունում են: Սա արդէն բաւական է ամեն ինչ բացատրելու համար: Այնուհետև այլ ևս սկզբունք է գառնում կոյր հնազանդութիւնը. միաբանութիւնը կազմուած է կամազուրկ և զիմազուրկ անդամներից, որոնցից իւրաքանչիւրի առաջին պարտականութիւնն է ծառայել միաբանութեան շահերին: Եւ որովհետեւ կրօնաւորութեան այդ կարգերը անկարելի է հաշտեցնել մարդկային բնաւորութեան հետ, ուստի բնականաբար զարգանում է փարիսեցիութիւնը, որի տակ պատսպարտում են բացասական շատ յատկութիւններ <sup>\*)</sup>:

\*) Մխիթարեանների այս պակասութիւնները մերկացը են Գաբ-

Դրէք այս դրութիւնը XVIII և XIX դարերի առաջադիմական պահանջների առաջ—և ձեզ համար անկասկածելի կը լինի, որ Մխիթարեան միաբանութիւնը, իրեւ մի կղզիացած կղերանոց, չէ կարող առաջադիմութեան, կատարելագործման գործիք համարուել:

Յետաղէմ պահանջնողականութեան մի մեծ նշան էլ էր կրում Մխիթարեան միաբանութիւնը իր հիմնարկութեան օրից՝ իր գրական գործունէութեան համար նա գործիք ընտրեց ոչ թէ ժողովրդի լեզուն, այլ անհասկանալի, մեռած գրաբարը:

XVIII դարի գրական շարժման ամենամեծ գործը այն էր, որ նա ժողովրդականացնում էր գիտութիւնն ու գեղարուեստը, ամենքին հասկանալի խօսքի միջոցով տարածում էր ժողովրդական խաւերի մէջ, զարթեցնում էր, աչք բաց անում: Ճակատագիրը մեզ էլ չնորհել էր այդ դարում գրական վերածնութիւն, բայց դա մեռած ծնունդ էր նախ և առաջ այն պատճառվ, որ ընդհանրութեան մատչելի լեզու չունէր: Այսպէս խօսելով, մենք չենք ուրանում Մխիթարեանների ահազին ծառայութիւնը. նրանց հետ ծնուեց ոսկեդարի գրաբարը, նրանք մաքրեցին, ճոփացրին մի աղաւաղած, սպանուած, վայրենացրած լեզու: Բայց այդ հսկայական ջանքերը բոլորովին չը փոխեցին գրականութեան դրութիւնը մեզանում: մեր գրականութիւնը դարձեալ մնաց «ընտրեանների» նեղ շրջանի սեփականութիւն և ժողովրդի բազմութիւնը դարձեալ հեռու էր մնում նրանից: Գրքի ու դպրոցի մէջ այնքան էլ դժուար չէր վերանորոգել հինգերորդ դարը. դրա համար բաւական էր որ ս. Ղազարի վարդապետները զարմանալի ջանափրութեամբ թաղուէին հնութեան մէջ, քըքրէին ձեռագիրները, մեղունների պէս պատրաստէին այն նիւթերը, որոնցից պիտի կազմուէր Մխիթարեան հարուստ ու ճոխ գրաբարը: Խսկ ժողովրդը լեզու էր մնացել գրաբարից, չէր հասկացել նրան: Ժողովրդը չէր կարող վերադառնալ հնութեան դարերին, եթէ ի հարկէ, ենթադրելու լինենք թէ եղել է մի ժամանակ, երբ գրաբարը հայ ժողովրդի ամբողջութեան համար հասկանալի, գործածական լեզու էր,—մի բան, որ ապացուցուած չէ և շատ վիճելի է: Ժողովրդը ունէր իր պահանջները, իր լեզուն:

Եւ այդ բանը շատ լաւ էր զգում Մխիթարը: Նա կազմեց աշխարհաբարի գերականութիւն, աշխարհաբար լեզուով «Քրիս-

թէլ վարդապետ Ալվաղովսկին իր «Աւրուագիծ Մխիթարեանց» բրօշիւրի մէջ և Սարդիս վարդապետ Թէոդորեանը իր «Պատմութիւն Սուրադիսն վարժարանին» մեծ աշխատութեան մէջ (Երեք հասոր, Փարփա, 1866).

տոնէական» գրեց: Սա մի հանգամանք է, որ ապացուցանում է թէ գրաբարը Մխիթարի ժամանակներում կարևորութիւն ներկայացնում էր լոկ զիտնական տեսակէտից, իսկ աշխարհաբարը—օրուայ լեզուն էր, ժողովրդի հետ խօսելու միակ յարմարաւոր և ցանկալի գործիքը: Դժբախտաբար, ինչպէս ասացինք, Մխիթարը մի համարձակ վերանորոգիչ չէր, այլ կօմպրօմիսների մարդ: Նա շատ լաւ ըմբռնում էր ժամանակի պահանջները, բայց հնութեան, անշարժութեան, կոյր աւանդապահութեան դէմ հսկայական կոխ սկսելու և առաջ տանելու ընդունակութիւնը չունէր. ուստի լեզուի հարցում էլ համակերպուեց տիրող հասկացողութիւններին և սովորութիւններին: Եւ այդպիսով գրաբարը զարձաւ Մխիթարեանների կուռքը: Երկար ժամանակ այդ նորոգած, ոսկէզօծած հնութիւնը տիրում էր մեզ վրայ, որովհետև այդպէս էր կամենում ս. Ղազարի վանքը. երկար ժամանակ նա չէր թոյլ տալիս որ մեր մէջ էլ, վերջապէս, ծնուի մի ժողովրդական գրականութիւն, որ լինի կեանքի զաւակ: Եւ մենք իզուր զոհեր էինք տալիս այդ կուռքին, իզուր անշարժացած սպասում էինք, որ նա աւելի շատ զարդարուի ոսկով ու ակներով...

Մեր այս զրութիւնից, ի հարկէ, չէր բղխում մի այնպիսի միտք թէ գրաբարի ուսումնասիրութիւնը միանգամայն ապարդիւն ժամավաճառութիւն էր: Ոչ, հին լեզուի մշակումը կարեւոր էր, որպէս զի մենք չը կարուենք մեր հին մատենագրութիւնից: Եւ եթէ մեզանում, բացի Մխիթարեան վանքից գոյութիւն ունենար մի այլ եռանդուն և կարող գրական ընկերակցութիւն, որի նպատակը լինէր միայն աշխարհաբարի զարգացումը, այն ժամանակ մենք Մխիթարեաններին կը տայինք գրրաբարը մշակողների, հարստացնողների պատիւը: Ցաւը հէնց այն է, որ մենք այդպիսի բախտ չունեցանք. բացի Մխիթարեան ուխտից չը կար մի այլ ուսուցիչ, զեկավար: Զգալով ժամանակի և ժողովրդի պահանջները, վենետիկի հայ վարդապետները պիտի գրաբարը պահէին իրանց գիտնական ուսումնասիրութիւնների համար, իսկ ժողովրդին պիտի տային գրքեր նրա լեզուով, մի և նոյն ժամանակ ջանք պիտի գործ դնէին այդ լեզուն մշակելու, հարստացնելու համար: Բայց Մխիթարեանները սիմոլաստիկ և հին պահպանողական մնացին ոչ միայն մատենագրութեան, այլ և լեզուի մէջ: Նրանք խրուեցին այն մոլորութեան մէջ, թէ գրաբարը պիտի գտանայ գրականութեան լեզու, թէ միայն այդ լեզուն կարող է զարդացնել հայի միտքը, կըրթել նրա սիրաբը: Դա մի ահազին յետադրիմական փորձ էր, որի վրայ այնքան մեծ աշխատանք վատնեցին Մխիթարեանները,

Եթէ նրանք աւելի շատ ունենային հակայ տաղանդներ, քան որքան ունեցան, եթէ նրանց աջողութէր աւելի երկար ժամանակով արգելք հանդիսանալ ժողովրդական գրականութեան դէմ, այսուամենայնիւ, վերջ ի վերջոյ յաղթուողները նրանք պիտի լինէին, որովհետև ժամանակի դէմ զնալը մարդկային ոյժերից միանգամայն վեր է:

Այդպէս էլ եղաւ. կործանուեց Միիթարեանների ոսկէզօծ կուռքը, իր բեկորների տակ թողելով նաև նրանց ահազին հեղինակութիւնը, նրանց զեկագարող գիրքը:

Վերածնութիւնը ազգերի մարմնի և արիւնի մէջ մտնում է գրականութեան և գպրոցների միջոցով: Նայենք Յունաստանին: XVIII դարում այստեղ էլ վերածնութիւն է սկսուած: Բազմանում են բարեկարգ գպրոցները, գրական գործիչները. ժողովրդական հասկանալի լեզուի պահանջը այնքան պարզ է զգացում, որ սկսում են թարգմանել հին յոյն հեղինակներին. օրւայ հարց է դառնում գրական ժամանակակից, նոր լեզու ստեղծելը: Աշխարհական տարրը անքան գիրակշռող գեր է կատարում գրականութեան մէջ, որ յունարէնի են թարգմանում անգլիական և ֆրանսիական նոր փիլիսոփաները. տարածւում են ազատ մողերը, քննադատութիւնը սկսում է փորփորել իրականութեան հիմքերը: Այդ շարժումը այնպիսի կերպարանք է ընդունում, որ յունաց եկեղեցին նոյն իսկ սկսում է վախել և դիմագրողի գեր է ստանձնում\*):

Մեզանում գրական և գպրոցական վերանորոգութիւնը միմիայն Միիթարեան միաբանութեան էր վերապահուած: Իսկ այդ միաբանութիւնը իր կաղմակերպութեամբ, գործելու եղանակով, իր ձեռքում ունեցած միջոցներով չէր կարող բաւարարութիւն տալ ժամանակի պահանջներին: Հայաստանում, գոնէ նրա արեելեան մասում, արդէն գործում էր քաղաքական ազատութեան գաղափարը. և սակայն, նա ուժեղ արձագանքներ չէ գտնում Միիթարեան վանքում, չէ արծարծւում այնտեղ, ժողովրդականացած իդէալի կերպարանք չէ առնում այնտեղ հատարակուող գրքերի մէջ:

Այս բոլորը XVIII դարի եւրոպականութեան համար կատարեալ յետաղիմութիւն էր, դաւաճանութիւն նոր մոգերի, առաջադիմութեան դէմ:

\*) Վ. Փայֆ, „История Европы XIX века“, т. II, М. 1889,  
Եր. 176—177.

Այսպէս է Միսիթարեան միաբանութեան նշանակութիւնը,  
եթէ նայենք Եւրօպայի կողմից։ Այժմ՝ զիմենք միւս կողմին,  
նայենք Միսիթարեաններին հայկական իրականութեան աջռով։  
Տեսնենք ինչ ունէինք մենք և ինչ աւելացրեց մեր ունեցածի  
վրայ Միսիթարի ստեղծած հիմնարկութիւնը։

Լ Է Օ

(Կը շարունակուի)